Azg
armenian daily
3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1998 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 225 (1729)

Կոբզոնը չի կարող նույն դահլիճում մնալ Մակաւովի հետ

ՄՈՍԿՎԱ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ. Դեկտեմբերի 2-ին ՌԴ Պետդումայի իր ոլեներ նիստը սկսեց պատգամավոր Գ. Ստարովոյտովայի եւ վերջերս Դաղստանում զոհված ԵԳՆ 5 զինծառայողների հիշատակը հարգելով: Դրան հաջորդեց անկախ պատգամավոր Ի. Կոբզոնի դեմարշը: Պատգամավորը լքեց նիստերի դահլիճը՝ ի նշան բողոքի իրավապահ մարմինների կողմից կոմունիստ Ա.Մակաւովի հրեայաց արտահայտությունների համար գործուն միջոցներ չկիրառելու դեմ: Կոբզոնը ներողություն խնդրեց իր գործընկերներից, հավաստիացնելով, որ իր հեռանալը նրանց դեմ չի ուղղված, եւ որ ինքը պարզապես չի կարող Մակաւովի հետ նույն դահլիճում գտնվել: Ի դեմ, «Նեզավիսիմայա գազետայի» հրապարակած Ռուսաստանի 20 ամենազդեցիկ քաղաքական գործիչների ցուցակում տեղ է գտել նաեւ գեներալ-լեյտենանտ Ալբերտ Մակաւովը՝ իր հրապարակային հակասեմիտական արտահայտություններից հետո: Նա 16-րդ տեղում է, թեպետեւ բացասական նշանով: Ցուցակը գլխավորում է վարչապետ Պրիմակովը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Երկիր, որ կարողացել է վերացնել իր արդյունաբերությունը»

Հսկիչ-դրամարկղները մաքշելի չեն ցեղասերներից շատերին

ԼԱՐԻՍԱ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Էլեկտրաէներգիայի սակագներից հետո հսկիչ-դրամարկղային մեքենաները դարձան այն երկու հեղման կեսերը, որոնց շնորհիվ խորհրդարանը փորձեց շրջել ափսարհը, ավելի ստույգ՝ Հայաստան պետության զարգացման հովվերգական պատկերը, որը, պատգամավորների համոզմամբ, անընդհատ ծաղուզվում է իրենց գործադիր իշխանության կողմից: Հսկիչ-դրամարկղային մեքենաները ողջ ափսարհում խորհրդանշում են քաղաքակիրթ առեւտուրը: Հիշենք խորհրդային ժամանակները, երբ ոչ միշտ, բայց մեծամասամբ վաճառքն իրականացվում էր կտրոններով, որ էլ նշված էր լինում գնված ապրանքի գինը եւ հավելյալ այլ մանրամասներ: Այսօր ժամանակակից կյանքն առաջարկում է նոր հսկիչ-դրամարկղային մեքենաներ, որոնց կտրոնների վրա հնարավոր կլինի տեսնել ապրանքի ինքնարժեքին զուգադրվող ավելացված արժեքի եւ մնացյալ հարկատեսակները, յուրօրինակ դրախտ հարկային տեսուչների ու սպառողների համար: Բայց այն, ինչ հասանելի է Յուդիտերին, հասանելի չէ ցարային մահկանացուին:

1999 թ. հունվարի 1-ից կառավարության որոշմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաները պարտադիր են դառնում հայաստանյան առեւտրային կետերի, սենդի միավորների, հյուրանոցների, սառնարանների եւ խաղատների համար: Ազգային հեռուստատեսությամբ զովազդային հոլովակներ են պտտվում, որոնք նաեւ ահազանգում են առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների դրամական հաշվարկներ իրականացնելը պատժվելու է տուգանքով:

Առաջին անգամ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը, կրկնահանցանքի դեպքում չորսհարյուրապատիկը: Հսկիչ-դրամարկղային մեքենաների գները, սակայն, դեռ հայտնի չեն, իսկ ԱԺ-ում երեկ հնչում էր մինչեւ 400 դոլար սարսափեցնող գինը, սարսափեցնող, հանգի Հայաստանի, անգամ երեւանյան տաղավարատիրոջ համար 400 դոլարն ազդեցիկ գումար է:

Տես ► էջ 8

ՍՅԱՄԲՈՒԼԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ԱՄՆ-ը Հայաստանի դիրքորոշումը «կառուցողական» է գնահատում

Մ. Նահանգների պետքարտուղարության խոսնակ Ջեյմս Ռուբինը դեկտեմբերի 1-ին հանդես է եկել ԵԱՀԿ-ի Սամբուլի առաջիկա գագաթաժողովի մասին հայտարարությամբ եւ բարձր գնահատել Թուրքիային ու Հայաստանին: Առաջինին՝ գագաթաժողովը հյուրընկալելու պատրաստակամության, իսկ երկրորդին՝ կառուցողական» դիրքորոշման համար:

Նշելով գագաթաժողովի վայրի նկատմամբ առարկությունների բացակայությունը որպես դրական նշան, Ջեյմս Ռուբինն ասել է, թե «այժմ հայտնի է դառնում, որ գագաթաժողովն առաջիկա տարի տեղի է ունենալու Սամբուլում»: «Մենք, ասել է խոսնակը, բարձրորեն ենք գնահատում գագաթաժողովը հյուրընկալելու Թուրքիայի առաջադեմ առաջարկը եւ ԵԱՀԿ-ի անդամ երկրների որդեգրած կառուցողական դիրքորոշումը, մասնավորաբար Հայաստանի կառավարության դիրքորոշումը, նման արդյունքի հասնելու գործում»: Ջ. Ռուբինը հույս է հայտնել, որ այս դրական «զարգացումը կօգտագործվի որպես սկիզբ կովկասյան տարածաշրջանի երկրների միջեւ համագործակցությունն ամրապնդելու գործընթացի»: «Մ. Նահանգներն ամրորեն հանձնառու են այդ գործընթացին», եզրակացրել է Ջեյմս Ռուբինը:

Դիտեցնենք, որ մինչեւ ԵԱՀԿ ներկայիս նախագահող երկրի՝ Լեհաստանի արտգործնախարար Գերեմեկի այցը Հայաստան, պատշաճական երեւանը լուրջ վերապահումներ էր արտահայտում եւ առկախ էր սպանում իր վեհոն ԵԱՀԿ գագաթաժողովի Սամբուլում կայացման նկատմամբ: Գերեմեկի այցից հետո Հայաստանը վերցրեց իր առարկությունը, ինչը քաղաքական շրջանակներում տարաբնույթ մեկնաբանությունների առիթ տվեց, որոնց ի պատասխան հանրապետության նախագահն իր հեռուստատեսային վերջին ասուլիսում հայտարարեց, որ դիրքորոշման փոփոխությունը հետեւանք չէր որեւէ արտաքին ճնշման, այլ կայացվել էր Հայաստանում: Նախագահ Քոչարյանը նույն առիթով խոստովանեց, որ Սամբուլի նկատմամբ Հայաստանի վերոնշյալ «ինչ-որ տեղ խաղախաղ էր (Ղարաբաղի հարցում) Մինսկի խմբի առաջարկներին համաձայնելու հետ կապված»: Պատճառաբանելով դիրքորոշման փոփոխությունը, նախագահը փաստեց, որ «եթե մեր պատճառով Սամբուլում տեղի չունենա ԵԱՀԿ գագաթաժողով, ապա դա ընդհանրապես կփոխվի Թուրքիայի հետ ապագա մի քանի տարվա ընթացքում հարաբերությունների լավացման, կարգավորման որեւէ հեռանկարի ճանապարհ»: Ասել կուզի, որ պատշաճական երեւանը պատրաստ է Թուրքիայի հետ բնականոն հարաբերությունների, պայմանով, որ, ինչպես Ռ. Քոչարյանը ձեւակերպեց նույն ասուլիսում, Անկարայի վերաբերմունքը լինի համապատասխան:

Սակայն, ավելացնենք մեր կողմից, քանի որ անցնող տարիներին, հակառակ երեւանի ողորդ ժեստերին, Անկարայի դիրքը Հայաստանի նկատմամբ չի եղել համապատասխան, անհրաժեշտ է այս անգամ մեր այս ժեստն ավելի ճիշտ եւ ավելի լավ «վաճառել» միջազգային ասպարեզում, հատկապես Մ. Նահանգների մոտ, որպեսզի համապատասխան քայլերի մղեն Անկարային: եվ պետքարտուղարության խոսնակի վերոհիշյալ հայտարարությունը կարելի է ընդունել որպես ամերիկյան կողմի պատրաստակամության նշան:

Պղծվել են Շահումյանի եւ Մյասնիկյանի արձանները

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Դեկտեմբերի լույս 2-ի գիշերը անհայտ անձինք ներկ են թափել եւ նշաններ նկարել Ստեփան Շահումյանի եւ Ալեքսանդր Մյասնիկյանի արձանների վրա:

Դեկտեմբերի 2-ին, առավոտից, Հայաստանի կոմունիստական կուսակցության անդամների նախաձեռնությամբ, ծաղկվում էին ոտնձգված արձանները: Նույն օրը, կասարվածին գնահատական տալու համար, ՀԿԿ կենտրոնական կոմիտեն Ստ. Շահումյանի արձանի մոտ բողոքի ցույց կազմակերպեց:

Ելույթ ունեցող կոմունիստներց եւ ոչ կուսակցականներց կասարվածը գնահատեցին բարբարություն: Ներեցեք խնդիրն է, այլեւ ողջ ժողովրդինը: Ցուցարարները հիշեցրին Ստ. Շահումյանի եւ Ալ. Մյասնիկյանի ներդրած ավանդը հայ իրականության մեջ:

ՀԿԿ կենտրոնական կոմիտեի լրատվական կենտրոնի դեկավար Ռոբերտ Սիսակոնյանի խոսքերով, կուսակցությունը փասի առթիվ հրեական գործ հարուցելու կարակցությամբ դիմել է ՀՀ դատախազությանը, ԵՊ եւ ԱՄ նախարարությանը:

Օսլոյում նախադասրասում են Սամբուլի գագաթաժողովը

Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում շարունակվում է ԵԱՀԿ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի 7-րդ հանդիպումը, որի գլխավոր նպատակն է նախադասրասել առաջիկա տարի Սամբուլում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովը: Հանդիպմանը մասնակցող ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, ինչպես **«Ազգին»** տեղեկացրեց նույն նախարարության մամուլի ծառայությունը, առանձին հանդիպումներ է ունեցել Մ. Նահանգների, Իտալիայի եւ Իսպանիայի պատվիրակությունների դեկավարների հետ: Մ. Նահանգների պետքարտուղարության ԱՊՀ երկրների հարցերով պատասխանատու, դեսպան Սթիվ Սեսսանովիչի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում Մինսկի խմբի վերջին առաջարկներին կողմերի պատասխաններից հետո ստեղծված իրավիճակը: Ինչպես հայտնի է, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հանրապետությունները այդ առաջարկը դրական էին գնահատել՝ որպես հիմք հետագա բանակցությունների, իսկ Ադրբեջանը մերժել էր:

ԿՈՆՅԱԿ-ԲՐԵՆԴԻ

Ա. Դարբինյան. «Պեռնո Ռիկարի» հետ դեռ չկա վերջնական համաձայնություն»

«Պեռնո Ռիկարից» 28 մլն դոլարի վճարումը 6 ամսով հետաձգելու առաջարկությունը եղել է, բայց դեռ չկա վերջնական համաձայնություն: Բանակցությունների խնդիր կա, եւ այժմ բանակցում ենք պայմանների մասին: Մինչեւ դեկտեմբերի 10-ը կգանք վերջնական համաձայնության, եւ, ըստ էության, կստորագրվի համաձայնագրի հայվելում», ասաց վարչապետ Արմեն Դարբինյանը ի պատասխան **«Ազգի»** հարցադրման, թե հանրապետության նախագահին եւ ԱԺ խոսնակին հանդիպելուց հետո «Պեռնո Ռիկար» ընկերությունը կասարության հետ վերջնական ի՞նչ փասաթուղթ է վավերացնելու:

Վարչապետի պատասխանը հույս ներշնչեց, որ ՀՀ կասավարությունը դեռեւս կկարողանա տվյալ իրադրության մեջ Հայաստանի համար նվազագույն կորուստներով համաձայնել Կոնյակի գործարանի լիիրավ սեփականատեր դառնալու հավակնող ֆրանսիական ընկերության հետ, այսինքն դեկտեմբերի 10-ին, ըստ պատշաճական համաձայնագրի պետքարտուղ մուծվելիք 28 մլն դոլարի ճակատագիրը կփորձի հասակեցնել: Կարծում ենք ճիշտ է սահմանել գումարի վճարման ժամանակացույց, ընդ որում այս դեկտեմբերի ընթացքում անդադարանորեն ակնկալելով 28 մլն դոլարի մի որոշ մասի վճարումը:

Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան, արձագանքելով **«Ազգին»**, պարզաբանեց, թե ինքը համոզված է, որ 6 ամիս հետո «Պեռնո Ռիկարը» կլուծի իր բոլոր խնդիրները «կամ հրաժարվում է, կամ համաձայնում»: Նա անդրադարձավ Հայաստանում եւ Ռուսաստանում երեւանի Կոնյակի գործարանի ադրանքային նշաններով վաճառվող կոնյակների խնդրին՝ ընդելով, թե այդ կոնյակները լուրջ խոչընդոտ են երեւանի Բրենդիի գործարանի ադրանքն իրացնելիս: Միշել Լեգրայի համոզմամբ, մեր կառավարությունը պետք է լրջորեն զբաղվի օտկայում վաճառվող կոնյակների որակի եւ արտոնագրերի ստուգմամբ: Միով բանիվ, «Պեռնո Ռիկար» ընկերությունը Հայաստանում եւ Ռուսաստանում մրցակցային լուրջ դժվարություններ է արձանագրում կարծես անկախ Ռուսաստանում գրող ֆինանսատնտեսական իրավիճակից կամ դրան զուգահեռ:

Ն. Պ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՐԱԳԻԿ

Այսօր Ազգ-ում տեղի կունենա «1999 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի ընդլայնված եզրափակիչ քննարկումը, որից հետո Ազգ հեռաբական եթեր-այում կառավարությունն ըստ էության կդնի իր վստահության խնդիրը, իսկ խորհրդարանը կլուծի

ԲՅՈՒՋԵ

Ի՞նչ խնդիր է դնում իր առջև կառավարությունը

Ոչ սոցիալական կամուրջ, ոչ արտադրության զարգացում

հավերժական երկընտրանքը՝ ընդունե՞լ, թե՞ չընդունել իր կողմից բազմիցս քննադատվող կառավարության երախայրիքը: Բյուջեն ոչ միայն մտահոգություն է, այլեւ հաղթականություն: **«Ազգը»** դիմեց «Երկրապահ» պատգամավորական խմբի գործուն անդամ, պատգամավոր Հերմինե Նաղդալյանին՝ առաջարկելով ներկայացնել իր գնահատականը, որը կարելի է համարել նաեւ մասնագիտական, հանգի Հերմինե Նաղդալյանը Հայաստանի գործարար կյանքում նկատելի ձեռներեց է:

«Երկրապահն» իր նիստում արդեն երկու օր է, ինչ քննարկում է իր հավատական դիրքորոշումը բյուջեի հանդեպ, որը վճռորոշ է, հանգի «Երկրապահը» խորհրդարանական մեծամասնություն է:

«Բյուջեն այն տեսքով, ինչ ներկայացված է մեզ, բնավ չի համապատասխանում առաջ քաշված կարգախոսին՝ սոցիալական կամրջի բյուջե: Անկեղծ ասած, ես համարյա սոցիալական ոչինչ չեմ տեսնում նրա մեջ: Այնուհետեւ եթե մենք հայտարարում ենք, որ պայքար ենք մղում աստվերի դեմ, ապա ես այս բյուջեի մեջ աստվերի դեմ պայքարի նշույլ չեմ միայն տեսնում, եթե թվերի լեզվով ենք խոսում, ապա այս տարբերակով աստվերից պոկվում է ընդամենը 1-2 տոկոս, իսկ դա նշանակում է ընդհանրապես չպայքարել, որովհետեւ 1-2 տոկոսով ոչինչ չես լուծի:

Մենք մեծ հնչեղություն տվեցինք սոցիալական խնդիրների լուծմանը՝ հատկապես 230 հազար անապահով ընտանիքների հունվարի 1-ից վճարվելիք սոցիալական նպաստներին: Բայց եթե հաշվի առնենք արժեզրկումը եւ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումը, ապա տարական թվաբանական հաշվարկը բավական է տեսնելու, թե ինչ կմնա այդ նպաստից 230 հազար անապահով ընտանիքներին: Այս բյուջեի ամենամեծ թերությունն այն է, որ ունի ուռճացված ծախսային մաս: Ես ընդհանրապես կարծում եմ, որ կառավարության նախատեսած ծախսերը բոլորովին չեն համապատասխանում այն արդյունքին, որ մենք սպասում ենք այս կառավարության գործունեության հետեւանքով, այսինքն՝ վերադարձ չկա: Ուռճացված ծախսային մասը պետք է խստորեն նվազեցվի: Այդման շնորհիվ կյանք կառավարության համար, երբ երկրի բնակչության մեծ մասը թշվառության մեջ է, ընդունելի չէ:

Այս բյուջեն զարգացման բյուջե չէ, եւ ՀՆԱ կառուցվածքում, եւ հարկային եկամուտների կառուցվածքում արդյունաբերական աճ պայմանավորող ոչ մի միտում չկա: Եվ այն օրենսդրական ակտերն էլ, որ այսօր մենք ընդունում ենք իբրեւ 99 թ. տնտեսության զարգացում եւ բյուջեի կատարում ապահովելու, ոչ մի հիմք չեն տալիս արտադրության զարգացման համար: Եվ չեմ էլ կարծում, որ այսօր կառավարությունն իր առաջ այդպիսի խնդիր դրել է: Եթե մենք ընդունում ենք այս բյուջեն, ապա պետք է մեր ժողովրդին ասենք, որ 99 թվականը դարձյալ չի լինելու արտադրության զարգացման տարի, չի լինելու նոր աշխատատեղերի, կենսամակարդակի բարձրացման տարի», ամփոփեց պատգամավորը: Մնում է եզրակացնել, որ այս բյուջեն համահունչ չէ նաեւ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նախընտրական ծրագրին, որը խոստանում էր աշխատատեղեր եւ արդյունաբերության վերածնունդ:

Ն. ԳԵԼԲԱՐՅԱՆ

ՇԻՐԱԿ

Անհամապատասխան լավատեսություն աղեսի գոտու խնդիրներում

Շնորհակալական հեռագրերը՝ ուշադրություն հրավիրելու շեմ

Շիրակի մարզպետ Արարատ Գոմցյանը ժուռնալիստի տանը հավաքված լրագրողների միջոցով շնորհակալական խոսք ուներ ասելու աշխարհի բոլոր այն երկրներին, կազմակերպություններին ու մարդկանց, որոնք երկրաշարժից հետո մեզ սատար կանգնեցին, եւ հայտնելու իր համոզմունքը, որ առաջիկա 3-4 տարում կշարունակվի օժանդակությունը:

«Այսօր մենք ուշադրության կարիք ունենք», ասաց նա եւ հույս հայտնեց, որ առաջիկայում մեզ օգնության ձեռք մեկնածներին շնորհակալության հեռագրեր ուղարկելը կրկին վերջիններիս ուշադրությունը կբեւեռի մեզ վրա: Բացի այդ, չէ՞ որ մենք վստահել ենք այդ շարունակական ուշադրությունը՝ մեր դժբախտությամբ «պարտս հող» դառնալով արտակարգ իրավիճակների ոլորտում ուսումնասիրությունների համար:

«Աղեսի գոտու նկատմամբ պետք է ունենալ նույնը դիրքորոշում», խորհուրդ տվեց պրն Գոմցյանը եւ նրբորեն, կարծես չասելով ասաց բաներ, որոնք հիմնականում հայտնի էին լրագրողներին. Շիրակի մարզի աշխարհագրական նոպաստավոր դիրքի, նրան սահմանամերձ երկրների, մարզերի, ինչպես նաեւ անցյալ փառքի ու ներկայիս անփառունակ վիճակի մասին:

Ներկայացրեց նաեւ, որ 96 թ.-ից ի վեր առաջընթաց նույնպես կա, մասնավորապես շինարարության ոլորտում ընթացքի մեջ է Գյումրիի կենտրոնական հատվածի, մարզի 23 դպրոցների կառուցումը, ինչպես նաեւ ակնհայտ է այդ ամենից բխող լավատեսական տրամադրությունը:

Չկոնկրետացնելով ու չորոշակիացնելով, նա նշեց նաեւ «ռեալ ծրագրեր ու պայմանավորվածություններ», որոնք եղած դրական տեղաշարժերի հետ հիմք են ստեղծում վստահանալու, որ մինչեւ 2001 թ. աղեսի գոտու խնդիրների իսպառ լուծման վերաբերյալ կառավարության վերջերս ընդունած որոշումը կիրականացվի:

Ըստ Գոմցյանի, մարզի ամենացավոտ խնդիրը սոցիալականն է, մասնավորապես բնակարանային խնդիրը, որ առավել սրված է Գյումրիում: Երկրաշարժից մինչեւ այսօր Գյումրիում կառուցվել է ընդամենը 9000 բնակարան, մինչդեռ գրեթե կրկնակին կառուցելու կարիք կա՝ մոտ 14000:

Անկարեւոր չէ գումարել նաեւ մի հանգամանք. **«Ազգի»** հարցին, թե երկրաշարժից հետո կառուցված բնակարանների անորակության մասին կարծիքները որքանո՞վ են իրավացի, պրն Գոմցյանը պատասխանեց, որ իսկապես դրանց մի մասը (թիվը չնշվեց) չբավարարելով սեյսմիկի անվտանգության պահանջները, խոտանվել է:

Մնում է վերը նշված 9000-ից հանել խոտանված անհայտ մասը, եւ աղեսի գոտում կատարված վերականգնողական աշխատանքների պատկերն ամբողջական կդառնա:

ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Փոստային նոր թողարկումներ

Սեպտեմբերի 26-ից ՀՀ փոստի եւ հաղորդակցության նախարարությունը փոստային շրջանառության մեջ է դրել մեկ նամականիշ՝ **ի հիշատակ 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի զոհերի**: Հոկտեմբերի 23-ից՝ Հայաստանի հանրային **ծառայություններ** շարքից երկու նամականիշ, որտեղ պատկերված են պիրսի եւ ագաս հանքախարերը: Դեկտեմբերի 1-ից՝ **Վալերի Բրյուսովի ծննդյան 125-ամյակին** նվիրված մեկ նամականիշ: Համապատասխան թողարկումների առաջին օրերը նամականիշերը մարվել են փոստատանը հատուկ մարման դրոշմակներով: Նամականիշերը տպագրված են Հոլանդիայի Joh. Enschede տպարանում:

Տ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ
Հրատարակչական բաժնի պետ

ՀՀ գլխավոր դատախազը «31»-ի գործով ներկայացրեց հսկողական բողոք

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ- Դեկտեմբերի 4-ին Հայաստանի Վճռաբեկ դատարանում կլսվի ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի հսկողական բողոքը «31»-ի գործով:

Հանրապետության գլխավոր դատախազը պահանջում է «31»-ի գործով դատապարտյալներ Տիգրան Վարդգեսի Ավետիսյանի, Գագիկ Կարապետյանի, Արթուր Ղազարյանի, Արսեն Երիցյանի նկատմամբ կարճել ՀՀ ՔՕ 67 հոդվածի, 65 հոդվածի երկրորդ մասի եւ 65 պրիմ հոդվածի մասով (=ՀՀ պետական եւ հասարակական կարգը բռնությամբ փոխելու կոչեր անել», «ահաբեկչական ակտ կատարելու հրապարակային կոչեր անելու նպատակով ստեղծված կազմակերպված հանցավոր խմբի մեջ մտնել», «առանձնապես վտանգավոր հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեություն ծավալել») քրեական գործը:

Հիշեցնենք, որ ՀՀ Գերագույն դատարանի 1997 թ. դեկտեմբերի 12-ի դատավճռով Տիգրան Վարդգեսի Ավետիսյանը հանցավոր էր ճանաչվել ՀՀ ՔՕ 209 պրիմ հոդվածով, 232 հոդվածի առաջին մասով, 65 պրիմ հոդվածով, 65 հոդվածի երկրորդ մասով, 67 հոդվածով եւ դատապարտվել մահապատժի: Գագիկ Կարապետյանը (ՀՀ ՔՕ 67 հոդված, 65 հոդվածի պրիմ, 65 հոդվածի երկրորդ եւ 232 հոդվածի առաջին մաս, 207 պրիմ երկրորդ մաս, 111 հոդվածի երկրորդ մաս՝ «անզգուշությամբ նվազ ծանր ասիճանի մարմնական վնաս պատճառել») եւ Արթուր Ղազարյանը (ՀՀ ՔՕ 67 հոդված, 65 հոդվածի պրիմ, 65 հոդվածի երկրորդ եւ 232 հոդվածի առաջին մաս, 207-ի պրիմ երկրորդ մաս) դատապարտվել են 7-ական տարվա ազատազրկման: Արսեն Երիցյանը դատապարտվել է 6 տարվա ազատազրկման (ՀՀ ՔՕ 67 հոդված, 65 հոդվածի պրիմ, 65 հոդվածի երկրորդ եւ 232 հոդվածի առաջին մաս, 207 հոդվածի պրիմ երկրորդ մաս):

ՀՀ ՔՕ 67, 65-ի երկրորդ մաս եւ 65 պրիմ հոդվածները պահպանվել են միայն «31»-ի գործով նշված անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ ցայսօր որպես խափանման միջոց մնում է կալանքը: Մնացած դատապարտյալների նկատմամբ նշված հոդվածներով քրեական գործը բեկանվել եւ կարճվել էր իրավության փոփոխության պատճառով:

Հսկողական բողոք ներկայացնելու համար ՀՀ գլխավոր դատախազին գանգատ էին ներկայացրել դատապարտյալների դատապաշտպանները, իսկ ՀՅՊ Հայաստանի Գերագույն մարմինը ներկայացրել էր միջնորդություն:

Դեկտեմբերի 7-ին Սպիտակում կբացվի «Հայոսկու» մասնաճյուղը

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ- Դեկտեմբերի 7-ին՝ 1988-ի երկրաշարժի 10-րդ տարեդարձի օրը, Սպիտակ քաղաքում կբացվի «Հայոսկի» հայ-իսրայելա-ամերիկյան համատեղ ձեռնարկության Սպիտակի մասնաճյուղը: Այն սկզբում կունենա 50, իսկ 6 ամիս անց 300 աշխատատեղ: Մասնաճյուղի արտադրանքը կիրացվի ԱՄՆ-ում: Նույն օրը տեղի կունենա նաեւ 88-ի երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի բացումը: Նրա կառուցման վրա ծախսվել է 200 հազար ԱՄՆ դոլար, որից 15 հազարը տրամադրվել է պետբյուջեից, իսկ մնացած գումարը հավաքվել է օտարերկրյա, միջազգային կազմակերպությունների՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով արված նվիրատվություններից:

ԱՆ. Ս.

«Շիրակ» օդանավակայանն ընդլայնում է թռիչքների ուղղությունները

Ինչպես տեղեկացանք քաղաքացիական ավիացիայի լրատվական կենտրոնից, դեկտեմբերի 1-ին Գյումրիում ՔԱԳՎ պետ Իսահակ Սեյրանյանի, ՀԱՈՒ-ի գործադիր տնօրեն Վ. Յարալովի, ավիացիայի այլ պատասխանատուների եւ Շիրակի մարզպետ Արարատ Գոմցյանի հանդիպման ժամանակ քննարկվել են Հայաստանի հյուսիսային օդային դարպասներին վերաբերող խնդիրներ: Մարզի զարգացման հեռանկարային ծրագրերը ներկայացնելով, մարզպետը կարեւորել է քաղաքացիական ավիացիայի դերն ու նշանակությունը, միաժամանակ նշել, որ Սամբուրի կամ Կարսի եւ Դուբայի ուղղություններով չվերթերի բահագործումը կնպաստի առեւտրի եւ տուրիզմի զարգացմանը: Հիշեցնենք, որ ներկայումս Գյումրիի «Շիրակ» միջազգային օդանավակայանից թռիչքներ են կատարվում Մոսկվա, Սամարա, Ռոստով, Կրասնոդար եւ Հալեպ ուղղություններով: Ըստ այդմ, «Հայկական ավիաուղիներն» այսուհետ Գյումրիի «Շիրակ» օդանավակայանը որպես մեկնման եւ ժամանման կետ կներառի իր փոխադրումների ծրագրում: Մարզպետի եւ ՔԱԳՎ-ի անունից Սպիտակի երկրաշարժից հետո ավիատորների կատարած մեծ աշխատանքի համար որոշվել է ուղերձներ հղել Հայաստան օգնության հասած տարբեր երկրների ավիացիոն իշխանություններին, ինչպես նաեւ հատուկ ուղերձ՝ հարավլավացի զոհված օդաչուների ընտանիքներին: Նույն աղբյուրի տեղեկատվության համաձայն, «Շիրակի» օդանավակայանում տեղի է ունեցել ՔԱԳՎ-ի արտագնա խորհրդակցություն, որը ներառել է թռիչքների անվտանգության եւ ուղեւորների սպասարկման հարցեր:

Ա. Ս.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@armenia.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ԳՐԻԳՈՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային տարուածքը «Ազգ» թերթի
Տղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿ

ԱՍՈՒԼԻՍ

Դատարաններն անկախ են... օրենքից, կամ փողն է ծնում իրավունքը

Հայաստանում զանգվածային բնույթ է ստանում փախստականների նորօրյա տեղահանությունը՝ օրինականացված դատական ասյանների վճիռներով, իրավական նիհիլիզմի մթնոլորտը շարունակվում է վտանգելով ոչ միայն փախստականների, այլեւ Հայաստանի քաղաքացիների տարական իրավունքները: Այս եզրակացությանն է հանգել «Ընդդեմ իրավական բռնության» (դատանդների դատապանության) հիմնադրամն՝ ամփոփելով փախստականների տեղահանման առթիվ հարուցված դատական գործերի փորձը, որ երեկ հրավիրած ասուլիսում ներկայացրին հիմնադրամի գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանը եւ նախագահ Միխայել Արամյանը: Դատական ասյանները եւ քաղաքեսարանների դատապնյանները գործնականում ի չիք են դարձնում փախստականների վերաբերյալ կառավարության թիվ 255 որոշումը, որն արգելում է փախստականների վտարումը գրաղեցրած կացարաններից՝ առանց նրանց մշտական բնակավայրով ապահովելու:

Ըստ էության, տեղի է ունենում պետական քաղաքականության չհայտարարված փոփոխություն, ստեղծվում է անտունների մի նոր խավ արդեն իրավապահ մարմինների օգնությամբ, համոզված են հիմնադրամի ղեկավարները: Ավելին, ոտնահարվում են միջազգային պարտավորությունները, որ ստանձնել է Հայաստանը՝ միանալով փախստականների վերաբերյալ ժնեւի 1991 թ.-ի համաձայնագրին եւ 1967 թ.-ի արձանագրությանը: Թաղապետարանները հայտարարում են, թե իրենք ՄԱԿ-ի փաստաթղթեր չեն ստորագրել եւ միջազգային համաձայնագրերի համար պատասխանատու չեն: Դատարանները, վկայակոչելով օրենսդրության գերակայությունը կառավարության որոշումների նկատմամբ, հայտարարում են, թե առաջնորդվում են Հայաստանի օրենսդրությամբ՝ վճիռների հիմքում դնելով փախստականների կացարանների ապօրինի սեփականաշնորհման գործողությունները փաստող վկայականներ: Պատասխանատու Ամ նախագահի եւ պատգամավորների ուշադրությունը հրավիրում ենք Հայաստանի միջազգային հանձնառությունների եւ կառավարության որոշումների ոտնահարման վրա: Անհրաժեշտ են պարզ, հստակ լուծումներ, որոնք փախստականներին ապահովագրեն չինովնիկների կամայականությունից, այլապես շուտով իրավական բռնությունների աճցանում կհայտնվի մեզանից յուրաքանչյուրը», ասաց հիմնադրամի գործադիր տնօրենը՝ Ադրբեջանից տեղահանված հայերի նկատմամբ Հայաստանում շարունակվող գործողությունները դիտարկելով իբրեւ ապակայունացնող գործոն, հանգի, նրա տվյալներով, ապօրինի վտարումների եւ վերաբնակեցումների բովում շահարկվում է «երկրապահի», բանակի անունը (առանձին դեպքերում փախստականների ընտանիքները «փոխարինվում են» զոհված ազատամարտիկների ընտանիքներով):

Տեղահանություն հայկական ձեւով

«Բռնի տեղահանության» ամենաթարմ դեպքերից մեկը, տիկին Ալավերդյանի եւ պրն Արամյանի համոզմամբ, օրինազանցության կարկառուն օրինակ է, որ հիշեցնում է դրվագներ ֆաշիզմի մասին պատմող ֆիլմերից կամ սումգայիթյան իրադարձություններից:

Ավելանա Գամբարովան դստեր հետ բնակվում էր Մալաթիա-Սեբաստիա համայնքի Հաղթանակ գյուղի 2-րդ փող, 45 հասցեում մինչեւ ս. թ. նոյեմբերի 22-ը: Սա անկողնային հիվանդ երեխաների նախկին մասնաշենքն է, որը կիսավեր վիճակում հանվել էր սոցապ նախարարության հաշվեկշռից եւ 1992-ին փախստականների կոմիտեի միջնորդությամբ հանձնվել Գամբարովաներին, նրանց միջոցներով բնակելի տեսքի բերվելով: Սակայն, երբ վերաբնակները, փորձելով օրինականացնել բնակարանը, ի թիվս այլ ասյանների դիմել են դատարան, պարզվել է, որ մասնաշենքի պահակը եւ տեխնիկական աշխատողը դեռեւս 1994 թ.-ին փախստականների «թիկունքում» սեփականացրել են ամփոփելով փախստականների տեղահանման առթիվ հարուցված դատական գործերի փորձը, որ երեկ հրավիրած ասուլիսում ներկայացրին հիմնադրամի գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանը եւ նախագահ Միխայել Արամյանը: Դատական ասյանները եւ թաղապետարանների պատասխանատուները գործնականում ի չիք են դարձնում փախստականների վերաբերյալ կառավարության թիվ 255 որոշումը, որն արգելում է փախստականների վտարումը գրաղեցրած կացարաններից՝ առանց նրանց մշտական բնակավայրով ապահովելու:

Ըստ էության, տեղի է ունենում պետական քաղաքականության չհայտարարված փոփոխություն, ստեղծվում է անտունների մի նոր խավ արդեն իրավապահ մարմինների օգնությամբ, համոզված են հիմնադրամի ղեկավարները: Ավելին, ոտնահարվում են միջազգային պարտավորությունները, որ ստանձնել է Հայաստանը՝ միանալով փախստականների վերաբերյալ ժնեւի 1991 թ.-ի համաձայնագրին եւ 1967 թ.-ի արձանագրությանը: Թաղապետարանները հայտարարում են, թե իրենք ՄԱԿ-ի փաստաթղթեր չեն ստորագրել եւ միջազգային համաձայնագրերի համար պատասխանատու չեն: Դատարանները, վկայակոչելով օրենսդրության գերակայությունը կառավարության որոշումների նկատմամբ, հայտարարում են, թե առաջնորդվում են Հայաստանի օրենսդրությամբ՝ վճիռների հիմքում դնելով փախստականների կացարանների ապօրինի սեփականաշնորհման գործողությունները փաստող վկայականներ: Պատասխանատու Ամ նախագահի եւ պատգամավորների ուշադրությունը հրավիրում ենք Հայաստանի միջազգային հանձնառությունների եւ կառավարության որոշումների ոտնահարման վրա: Անհրաժեշտ են պարզ, հստակ լուծումներ, որոնք փախստականներին ապահովագրեն չինովնիկների կամայականությունից, այլապես շուտով իրավական բռնությունների աճցանում կհայտնվի մեզանից յուրաքանչյուրը», ասաց հիմնադրամի գործադիր տնօրենը՝ Ադրբեջանից տեղահանված հայերի նկատմամբ Հայաստանում շարունակվող գործողությունները դիտարկելով իբրեւ ապակայունացնող գործոն, հանգի, նրա տվյալներով, ապօրինի վտարումների եւ վերաբնակեցումների բովում շահարկվում է «երկրապահի», բանակի անունը (առանձին դեպքերում փախստականների ընտանիքները «փոխարինվում են» զոհված ազատամարտիկների ընտանիքներով):

Տեղահանություն հայկական ձեւով

«Բռնի տեղահանության» ամենաթարմ դեպքերից մեկը, տիկին Ալավերդյանի եւ պրն Արամյանի համոզմամբ, օրինազանցության կարկառուն օրինակ է, որ հիշեցնում է դրվագներ ֆաշիզմի մասին պատմող ֆիլմերից կամ սումգայիթյան իրադարձություններից:

Ավելանա Գամբարովան դստեր հետ բնակվում էր Մալաթիա-Սեբաստիա համայնքի Հաղթանակ գյուղի 2-րդ փող, 45 հասցեում մինչեւ ս. թ. նոյեմբերի 22-ը: Սա անկողնային հիվանդ երեխաների նախկին մասնաշենքն է, որը կիսավեր վիճակում հանվել էր սոցապ նախարարության հաշվեկշռից եւ 1992-ին փախստականների կոմիտեի միջնորդությամբ հանձնվել Գամբարովաներին, նրանց միջոցներով բնակելի տեսքի բերվելով: Սակայն, երբ վերաբնակները, փորձելով օրինականացնել բնակարանը, ի թիվս այլ ասյանների դիմել են դատարան, պարզվել է, որ մասնաշենքի պահակը եւ տեխնիկական աշխատողը դեռեւս 1994 թ.-ին փախստականների «թիկունքում» սեփականացրել են

Ամ նախագահի, վարչապետի, Ամ նախագահի եւ պատգամավորների ուշադրությունը հրավիրում ենք Հայաստանի միջազգային հանձնառությունների եւ կառավարության որոշումների ոտնահարման վրա: Անհրաժեշտ են պարզ, հստակ լուծումներ, որոնք փախստականներին ապահովագրեն չինովնիկների կամայականությունից, այլապես շուտով իրավական բռնությունների աճցանում կհայտնվի մեզանից յուրաքանչյուրը», ասաց հիմնադրամի գործադիր տնօրենը՝ Ադրբեջանից տեղահանված հայերի նկատմամբ Հայաստանում շարունակվող գործողությունները դիտարկելով իբրեւ ապակայունացնող գործոն, հանգի, նրա տվյալներով, ապօրինի վտարումների եւ վերաբնակեցումների բովում շահարկվում է «երկրապահի», բանակի անունը (առանձին դեպքերում փախստականների ընտանիքները «փոխարինվում են» զոհված ազատամարտիկների ընտանիքներով):

Տեղահանություն հայկական ձեւով

«Բռնի տեղահանության» ամենաթարմ դեպքերից մեկը, տիկին Ալավերդյանի եւ պրն Արամյանի համոզմամբ, օրինազանցության կարկառուն օրինակ է, որ հիշեցնում է դրվագներ ֆաշիզմի մասին պատմող ֆիլմերից կամ սումգայիթյան իրադարձություններից:

Ավելանա Գամբարովան դստեր հետ բնակվում էր Մալաթիա-Սեբաստիա համայնքի Հաղթանակ գյուղի 2-րդ փող, 45 հասցեում մինչեւ ս. թ. նոյեմբերի 22-ը: Սա անկողնային հիվանդ երեխաների նախկին մասնաշենքն է, որը կիսավեր վիճակում հանվել էր սոցապ նախարարության հաշվեկշռից եւ 1992-ին փախստականների կոմիտեի միջնորդությամբ հանձնվել Գամբարովաներին, նրանց միջոցներով բնակելի տեսքի բերվելով: Սակայն, երբ վերաբնակները, փորձելով օրինականացնել բնակարանը, ի թիվս այլ ասյանների դիմել են դատարան, պարզվել է, որ մասնաշենքի պահակը եւ տեխնիկական աշխատողը դեռեւս 1994 թ.-ին փախստականների «թիկունքում» սեփականացրել են

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏ

Այնպե՞ս չէր սազում նրան իր այդ վերջին դերը

Դեկտեմբերի 2-ին Կարո Խաչվանքյանին վերջին հրաժեշտը տալու համար Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոն էին եկել մշակութայնության ներկայացուցիչներ՝ գրողներ, ռեժիսորներ, դերասաններ, թատերագետներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, լրագրողներ եւ, իհարկե, նրա արվեստի անթիվ երկրպագուներ: Նա բեմում էր վերջին անգամ, պառկած էր դագաղի մեջ, որի շուրջը հերթով պատվո պահակ էին կանգնում նրա արվեստակիցները: Խորապես վշտացած էին բոլորը, այնպես չէր սազում նրան իր այդ վերջին դերը:

Թատրոնի ցուցասրահում տեղ էին գտել բազմաթիվ դերակատարումների լուսանկարները, որոնք հնարավորություն էին տալիս կարճատեւ պահերի ընթացքում տեսնել, վերհիշել ու վերապրել Կարո Խաչվանքյանի կենդանի բեմական ուղին: Սիա անմոռաց եւ անկրկնելի դերակատարումներ «Պարերի ուսուցիչը», «Վենետիկյան երկվորյակներ», «Ատամնաբույժն արեւելյան», «Սորգանի խնամին», «Տախի, տախի», «Իմ զոհանչը» եւ էլի ու էլի բազմաթիվ բեմադրություններից, ինչպես նաեւ դերեր ֆիլմերից:

Եվ հիմա արվեստագետները եւ արվեստասերները միասին եկել էին վերջին անգամ տեսնելու ու հրաժեշտ տալու մեծ տաղանդի ու մեծ հմայքի տեր այդ մարդուն, իրենց սիրելի «Ծիծաղի արքային»:

Ժ. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ցուցահանդես՝ նվիրված երկրաշարժի 10-րդ տարելիցին

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սպիտակի երկրաշարժի 10-րդ տարելիցին նվիրված կառավարական միջոցառումների շրջանակներում դեկտեմբերի 2-ին Ճարտարապետության ազգային թանգարանում բացվեց ցուցահանդես, որը կազմակերպել էր Քաղաքաշինության նախարարությունը՝ թանգարանի հետ մեկտեղ: Այն ներկայացնում է 17 հիմնարկ-ձեռնարկություններ ու նախագծային ինստիտուտների՝ ապեցի գոտում կատարած նախագծաշինարարական աշխատանքները, ինչպես նաեւ ապեցի գոտու երեխաների ստեղծագործությունները:

Ինչպես նշեց թանգարանի տնօրեն Ասոն Գրիգորյանը, ցուցահանդեսը նպատակ ունի մեկ անգամ եւս ներկայացնել ապեցի գոտին՝ իր խնդիրներով. ինչպե՞ս էր այն մինչ երկրաշարժը, ի՞նչ վիրախարի ավերածություններ եղան, ինչպիսի՞ շինարարական, նախագծային աշխատանքներ կատարվեցին թե՛ արտերկրի, եւ թե՛ մեր շինարարների կողմից եւ որո՞նք են այսօրվա անելիքները: Ցուցահանդեսը, ըստ տնօրենի, որոշ չափով ուսուցողական է եւ ունի գործնական նպատակ. կանցկացվեն դասախոսություններ, կներկայացվեն ապեցի գոտում ձեռնարկվելիք անհրաժեշտ միջոցառումները, սեյսմիկ ծառայությունների գործունեությունը:

Ցուցահանդեսի առաջին այցելուի պատիվը տրվեց ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանին՝ Սպիտակի երկրաշարժի 10-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացման պետական հանձնաժողովի նախագահին: Վարչապետի կարծիքով, այն ամենը, ինչ ցուցադրված է, խոստումնալից է եւ ներկայանալի, ցույց է տալիս, որ մենք կարող ենք դիմակայել ապեցին:

«10 տարի առաջ տեղի ունեցածը մեզ համար պետք է նաեւ դաս լինի՝ հնարավորին չափ կարողանալու մեղմացնել ապեցի հետեւանքները», ասաց Ա. Դարբինյանը:

ԱՆԳՐԱԳԱՐԹ

Անհաս ձեռներեցներ, ուշադիր եղեք

Նոյեմբերի 24-ի **«Ազգ»** օրաթերթում տպագրված «Ինչպես ազատվել անհաս ձեռներեցի վկայականից» հոդվածով բարձրացված հարցը հուզում է ոչ միայն հոդվածագիր անհաս ձեռներեցին, այլեւ՝ մեր հասարակության բազմահազար անդամներին եւ հարկային տեսչության մարմիններին:

Բոլորիս հայտնի պատճառներով եւ նպատակներով ամենատարբեր մասնագիտությունների եւ նախասիրությունների տեր մարդիկ փորձում են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ եւ համապատասխան օրենսդրության չիմացության կամ թերիմացության հետեւանքով կանգնում տարբեր բարդությունների առջեւ:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել պետական ռեգիստրում գրանցված ձեռնարկությունը կամ անհաս ձեռներեցը, առանց այդպիսի գրանցման ձեռնարկատիրական գործունեությունը դիտվում է ապօրինի եւ առաջացնում վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Պետական գրանցում ստացած հարկատուն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի համաձայն պարտավոր է գրանցում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում հաշվառման կանգնել հարկային տեսչությունում եւ ստանալ հարկ վճարողի վկայական՝ հաշվառման համար: Ըստ նույն հոդվածի, հարկատուի պարտականություններից է նաեւ սահմանված ժամկետներում հաշվետվություններ, հայտարարագրեր, հաշվարկներ ներկայացնելը հարկային տեսչության մարմիններին: Եղած պարտականությունները սահմանված ժամկետներում չկատարելը համարվում է վարչական իրավախախտում եւ առաջացնում վարչական տուգանք համապատասխան օրենսգրքի համաձայն:

Հոդվածում հիշատակված դեպքում անհաս ձեռներեց Սարիբեկ Հակոբյանը վարչական տուգանքի է ենթարկվել այդպիսի խախտման համար: Ինչ վերաբերում է անհաս ձեռներեցից «ստորագրություն վերցնելուն», ապա նրանից ընդամենը վերցվել է օրենսգրքով նախատեսված բացատրություն, որը, բնական է, ստորագրվել է իր կողմից: Նախկին հատակագրի հետ համեմատության որեւէ հիմք կամ առիթ չկա:

Միաժամանակ հարկ է նշել, որ նշանակված վարչական տուգանքը վճարելը հարկային պարտավորություն չէ եւ արգելք չի հանդիսանում անհաս ձեռներեցի գործունեության դադարեցումը պետական ռեգիստրում գրանցելուն:

Հուսով եմ, վերոգրյալը կնպաստի անհաս ձեռներեցների եւ այլ հարկատուների կողմից հարկային օրենսդրության իմացությանը եւ իրավախախտումների կանխարգելմանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ,
ՀՀ հարկային տեսչության
պետի տեղակալ

ԻՄ-ը կրկին մրցանակներ է շնորհելու լրագրողներին

ԵՐԵՎԱՆ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դեկտեմբերի 10-ին նշվող մարդու իրավունքների միջազգային օրվա կապակցությամբ Ինֆոռոռում միավորումը կազմակերպել է այդ թեմայով գրող հայ լրագրողների հերթական մրցույթ: Դեկտեմբերի 2-ին ԻՄ-ի գրասենյակում հավաքվել էին մրցայանի անդամները՝ ամփոփելու մրցույթի արդյունքները:

Այդ աշխատանքին ներկա լինելու հնարավորություն լրագրողներին չընձեռվեց (թեեւ նախապես խոստացվել էր), սակայն հայտնի դարձավ, որ 14-հոգանոց մրցայանը, որի կազմում են, մասնավորապես, Պարույր Հայրիկյանը, Պերճ Զեյթունցյանը, Լյուդմիլա Հարությունյանը եւ այլք, կորոշեն, իրենց կարծիքով, մարդու իրավունքների թեման իրենց հրապարակումներում լավագույնս լուսաբանած լրագրողներին, որոնց անունները կհրապարակվեն, եւ մրցանակները կհանձնվեն Մարդու իրավունքների պատշաճության միջազգային օրը՝ դեկտեմբերի 10-ին:

Ծնվեց համայնքային նոր թերթ

Երեւանի մի համայնք եւս ունեցավ իր թերթը: Լույս տեսավ Էրեբունի համայնքի ավագանու եւ քաղաքապետարանի «Էրեբունի» պատշաճաթերթը, որի նպատակը Էրեբունի համայնքի կյանքը լուսաբանելն է, բնակիչների հոգսերին մոտիկից ծանոթանալը եւ դրանք լուծելու ուղիներ գտնելը: 130 հազար բնակիչ ունեցող համայնքի համար ավելի հեշտ կլինի այս թերթի միջոցով խոսել ծառացած բազմաթիվ խնդիրների մասին, եւ դրական փոփոխություններ ակնկալելն էլ ավելի հավանական է (համենայն դեպս, որոշակի հիմնախնդիրներ կլուծվեն), քան եթե այդ հարցերը բարձրացվեն հանրապետական մամուլում: Թերթի գլխավոր խմբագիրն է Լավրենտի Միրզոյանը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Երկրաշարժ-10

ՏԱՍԸ ՏԱՐԻ

Ցավ եւ հույս

Պատասխաններ 1988-ի դեկտեմբերյան օրագրից

1988-ի նոյեմբերի վերջին սփյուռքահայության հեռ մշակութային կառի կոմիտեի կողմից գործուղվել էի Ֆրանսիա՝ ծանոթանալու հայ համայնքի կյանքին:

Դարաբաղյան շարժման բուռն ժամանակներն էին...

Հայաստանյան լարված, խառնաշփոթ, տարուբերվող իրադրության մեջ սիրտս, ինչպես ասում են՝ մի տեսակ կախ էր, ու ես դժվարանում էի թողնել հազար ու մի հարցականներով լցված հարազատ քաղաքը... Եվ գնացի՝ տագնապի, անապահով իրադարձությունների ծանր զգացումով, որն անընդհատ ուզում էի հեռացնել ինձնից, թաղել հոգուս խորքերում, Փարիզի շեղ ու տոնական պատկերների տակ, անկաշկանդ, անկեղծ ու ուրախ մարդկանց խոսք ու զրույցների մեջ...

Գրեթե չէր հաջողվում, եւ ես հոգուս բոլոր նյարդերով, բոլոր բջիջներով ու զգայարաններով շարունակում էի կապված մնալ Հայաստանին՝ այդպես էլ չկարողանալով զգալ ու ընկալել ոչ Փարիզի տոնական շեղությունը, ոչ ֆրանսիական բնապատկերները, ոչ Նիսի անպատմելի գեղեցկությունը, ոչ էլ անգամ բազմաթիվ նոր ու հետաքրքիր ծանոթությունները...

1988-ի դեկտեմբերի 7-ի առավոտը Փարիզում բացվեց սովորական ու խաղաղ (ասում են՝ Հայաստանում նույնպես):

Չափազանց գործնական օր էի ծրագրել՝ հանդիպումների ու հարցազրույցների համար բազմաթիվ ժամադրություններ նշանակելով:

Կեսօրից փիչ անց մտա Ֆրանսահայ մշակութային միության ակումբ՝ ուր նախատեսված էր հանդիպում միության ղեկավարների հետ: Սրահում հավաքված հայերի խեղճացած, շփոթահար հայացքներից կռահեցի, որ ինչ-որ վատ բան է կատարվել: Բոլորովին թարմ էին Խոջալուի եւ Գանձակի հայության դաժան տեղահանության լուրերը, եւ առաջին միտքը, որ ծագեց՝ Դարաբաղի հետ էր կապված: Պատասխան պահանջող հայացքիս հարցականին հայերից մեկը կամացուկ պատասխանեց. «Հայաստանում երկրաշարժ է տեղի ունեցել...»: Արյունը միանգամից պաղեց երակներիս մեջ, հայացքիս հարցականն ավելի պրկվեց. «Ասում են 100 զոհ է եղել», մեղավոր արձագանքեց մեկ ուրիշը:

100 զոհ... Երանի ճշմարիտ լիներ...

Առաջին իրական լուրերն ու նկարահանումները Ֆրանսիա հասան նույն օրը գիշերը: Ֆրանսիական հեռուստատեսությամբ հաճախ էր երեւում Շառլ Ազնավուրը՝ իր տխուր, շատ տխուր աչքերով: Նա ֆրանսահայերին կոչ էր անում գործել արագ, կազմակերպված, ինքնանվիրումով... Անձնական օրինակ ցուցաբերելով՝ Շանզ Էլիզեի բանկերից մեկում նա բավական մեծ գումար դնելով հաշիվ բացեց «Շառլ Ազնավուրը՝ Հայաստանին» նշանաբանով: Հիշում եմ, թե ինչպես ֆրանսիական հեռուստատեսության աշխատակիցը հանդիպումներից մեկի ժամանակ հարցրեց.

– Իսկ դուք հարազատներ ունե՞ք Հայաստանում:

– Ամբողջ հայ ժողովուրդն իմ հարազատն է, բայց ազգականներ ունեմ Լենինականում,-պատասխանեց Շառլը:

Թերթերում, ռադիոյով, հեռուստատեսությամբ խոսում եւ հարցազրույցներ էին տալիս հայկական ծագում ունեցող բազմաթիվ մեծ արվեստագետներ ու հայտնի դեմքեր: Ասում էին, թե նրանցից շատերն առաջին անգամն էին այդպես հրապարակավ խոսում իրենց հայ լինելու մասին. ահավոր դժբախտությունը երեւի դիպել էր նրանց հոգու ամենախորքում թաղված լարերին: Ամեն մարդու կյանքում դա գոնե մեկ անգամ պատահում է... Ֆրանսահայ բազմաթիվ նկարիչներ աճուրդի հանեցին իրենց ստեղծագործություններից ստացված գումարը փոխանցելու համար Հայաստանի օգնության ֆոնդին: Դպրոցահասակ երեխաները խնայում էին իրենց նախաճաշի ոչ մեծ գումարները, որպեսզի դրանք ուղարկեն հայաստանցի իրենց հասակակիցներին: «SOS ARMENIE» շարժումը անընդհատ մեծանում էր, նրանում ընդգրկվում էին ֆրանսիացիներ, ֆրանսաբնակ իսպանացիներ, հրեաներ, բոլո՛ր, բոլո՛ր... Ես լինում էի ամենուր, որտեղ աշխատում էին հայերը՝ Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցում, Ֆրանսահայ մշակութային միությունում, Ալֆորվիլի, Իսի լե Մուլինոյի հայկական ակումբներում... Եվ հասկանում էի, որ այդ օրերին հայաստանցու միակ տեղը Հայաստանն է՝ բզկտված, ճեղքված, օգնության կարոտ Հայաստանը ու օրերը հաշվելով՝ սպասում էի վերադարձին:

Հաճախակի, բայց սակավաբառ, գրեթե լուռ հանդիպումներ էի ունենում ֆրանսաբնակ մեր նշանավոր հայրենակիցների՝ Անդրանիկ Ծառուկյանի, Ռուբեն Մելիքի, Ժան Մարի Գառզուի, Արփիկ Միսաքյանի, Խաչատուր Ժերանյանի, Կարիկ Պասմաճյանի եւ այլոց հետ, որոնք դիմակայելու դժվար բառեր էին փնտրում՝ ի դեմս ինձ սիրտ տալու բոլոր հայաստացիներիս: Նրանք կարծես մի փիչ թեթեւություն էին զգում այն հանգամանքից, որ Ֆրանսիան առաջին երկիրն էր, որ անհապաղ, հենց աղետի հաջորդ իսկ օրը երկու օդանավ առաջին անհրաժեշտության իրեր, դեղորայք, ինչպես նաեւ բժիշկներ, արտակարգ իրավիճակներում աշխատող մասնագետներ, անգամ որոնող շներ ուղարկեց Հայաստան: Հիշում եմ, թե ինչպես հայերը գիշեր-ցերեկ կանգնած էին Ֆրանսիայի սոցիալական ապահովության նախարարության շենքի առջեւ եւ իրենց ներկայությամբ փորձում էին ավելի արագացնել ուղարկվող օգնությունը: Նախարար Քուշները կարեկցանքի, հանգստացնող խոսքեր էր ասում հայերին, հորդորում վերադառնալ տները, հաստատում, թե ֆրանսիական կառավարությունն անում է ամեն հնարավորն օգնելու աղետյալներին, բայց հայերը շարունակում էին կանգնած մնալ նախարարության շենքի առջեւ՝ ուղարկվող օգնությանը միացնելով նաեւ իրենց զգացումները:

Ֆրանսիական հեռուստատեսության լրատվական ծրագրերը երկար ժամանակ բացվում էին հայաստանյան լուրերով, ակնհայտ էր, որ աշխարհը մի զարմանալի միահամուռությամբ շտապում էր Հայաստան: Ես դառը ֆնծիծաղով մտածում էի, թե գուցե Աստված այդ չլսված-չտեսնված աղետի միջոցով փորձեց շարժե՞լ մարդկության նիրհող, կորսվող գութը, կամ գուցե այդ կերպ մարդկությանը հնարավորություն տվեց խաղե՞լ իր մեղքերը հայության հանդեպ: Բայց ամեն ինչ այնքան անկարեւոր, այնքան չնչին էր թվում արդարացնել չունեցող այդ ահավոր փաստի համեմատ...

...Դեկտեմբերի 16-ին վերադառնում էի Փարիզից, այն քաղաքից, որի մասին Հեմինգուեյը գրել է. «Փարիզը տոն է, որը միշտ քեզ հետ է»: Ու տխրորեն մտածում էի, թե ես հավանաբար աշխարհում այն հազվադեպ մարդկանցից եմ, որի համար Փարիզն այդպես էլ տոն չեղավ:

Ինքնաթիռում նստած էի փշրված հոգով ու բոլոր վերադարձների մեջ առաջին անգամ՝ երկիրս տեսնելու ցանկության ու կարոտի փոխարեն հոգիս լցված էր վախի անսովոր զգացումով. ինչպե՞ս պիտի տեսնեմ Հայաստանը:

...Սոսկիկ նստած ռուս ուղեւորներից մեկն իմ կողմը թեքվելով ֆրանսերեն ինչ-որ հաճոյախոսություն արեց: Ես նրան ռուսերեն պատասխանեցի, թե հայ եմ: Մարդը միանգամից այլայլվեց, ժպիտը պաղեց դեմքին... Ոտքի կանգնեց ու խոնարհվելով ցավակցեց ինձ...

Նորից միտքս հեռացավ ինքնաթիռից, ու ես սկսեցի մեկիկ-մեկիկ հիշել ձեզ՝ Անդրանիկ Ծառուկյան, Պարգեւ Շամիկյան, Զոհրաբ, Արաքսի, Սոնա, Ռուբեն Մելիք, Տիգրան Հաճյան, Կարիկ Պասմաճյան, Արփիկ Միսաքյան, Անդրանիկ Քեչիշյան, Հերմինե, Կարպիս Ափրիկյան, Ժան Մարի, Կլարա, Հովհաննես Գույումճյան, Հարություն Պեզճյան, Հակոբ Թերզյան, Արի Թոփուզխանյան... բոլորիդ ում հետ տխրեցինք ու արտասվեցինք, անմխիթար խոսքեր փոխանակեցինք ու նաեւ փորձեցինք հուսադրել իրար՝ թե ամեն ինչ լավ կլինի... Կարոտեցի ձեզ, աշխարհի բոլո՛ր հայերին ու ուզեցի բղավել. «Սիրեցե՛ք միմյանց, դողացե՛ք աշխարհի վրա հայլող ամեն հայի համար...»:

ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ
7-16 դեկտեմբերի, 1988 թ.

Նորից խոնարհվում ենք երկրաշարժի զոհերի հիշատակի առջեւ

Երկրաշարժի գույժը ինձ հասավ Նյու Յորքի հյուրանոցներից մեկում, առավոտյան միացնելով հեռուստացույցը, ցնցված մնացի ավերումների ահավոր տեսարաններից: Մի պահ նույնիսկ թվաց, թե իմ հայրենիքում պատերազմ է սկսվել... Հետո զանգահարեց տիկին Դուբինինան՝ ԱՄՆ-ում այն ժամանակվա խորհրդային դեսպանի կինը՝ պատվարժան ու ազնիվ մի հայուհի, որը խորվված հոգով մի երկու խոսքով պատմեց, թե ինչ է տեղի ունեցել եւ ինձ, որպես բժշկի, հարցրեց, թե ինչպես պետք է կազմակերպել օգնության աշխատանքները եւ ինչով կարող է օգտակար լինել ինքը:

Ես Նյու Յորքում էի գտնվում տարբեր բնագավառների խորհրդային մասնագետների պատվիրակության կազմում, որոնք ԱՄՆ էին ժամանել խորհրդային գիտության նվաճումները ցուցադրելու: Նրանց մեջ ես միակ բժիշկն էի, ուստի թե՛ նրանք եւ թե՛ ամերիկացի ծանոթ ու անծանոթ գործընկերներս օգնության հարցում առաջին հերթին ինձ էին դիմում: Ես հատուկ եղա ամերիկյան շատ հիվանդանոցներում, եւ ամենուրեք բժիշկները, հայտնելով իրենց ցավակցությունը, մեծ պատրաստակամություն էին հայտնում օժանդակելու մեր ժողովրդին: Հատկապես Նյու Յորքի ոսկրահոդային վիրահատության ինստիտուտի մասնագետները, որոնցից ամենահամբավավորները եկան նաեւ Մոսկվա եւ վիրահատական ու այլ անհրաժեշտ օգնություն ցույց տվեցին տուժածներին:

Երբ վերադարձա Մոսկվա, վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի կենտրոնական ինստիտուտում, որտեղ աշխատում եմ 35 տարի, արդեն պառկած էին աղետի գոտուց բերված մի քանի հարյուր ծանր հիվանդներ: Հիրավի ողբերգական տեսարան էր: Ինստիտուտի բժիշկներից շատերն արդեն Լենինականում եւ Սպիտակում էին: Ստիպված էինք համեմատաբար թեթեւ հիվանդներին տեղափոխել քաղաքի ուրիշ հիվանդանոցներ՝ երկրաշարժից տուժածներին տեղավորելու համար: Գիշեր-ցերեկ դուրս չէինք գալիս վիրահատարաններից: Շուտով ինքս մեկնեցի Լենինական եւ տեսա մեր ժողովրդի գլխին փուլ եկած արհավիրքի սահմռկեցուցիչ հետեւանքները: Հետագայում էլ մի քանի անգամ եղա երկրաշարժի վայրերում եւ Մոսկվա տեղափոխեցի բարձրորակ բուժօգնության կարիք ունեցող շատ հիվանդների:

Երբ տասնամյակից ավելի նշտարը ձեռքիս շրջել եմ աշխարհով մեկ եւ կատարել հազարավոր բարդ վիրահատություններ, բայց այնպիսի ծանր կոտրվածքներով ու վնասվածքներով հիվանդներ, որպիսիք երկրաշարժից տուժածներն էին, չէի տեսել: Մինչ այդ մեր ինստիտուտի կլինիկաներում բուժվել էին շատ «աֆղաններ»: Սակայն էական տարբերություն



կար նրանց ու հայաստանցիների վնասվածքների միջեւ: Գնդակից ջարդված ոսկրաբեկորները, օրինակ, ինչքան էլ շատ լինեն, կարելի է ի մի բերել, պարզապես երկար ժամանակ կպահանջվի ապաքինման համար: Իսկ երկրաշարժից տուժածները, տեւական ժամանակով գտնվելով ծանրության տակ, հայտնվում են փտախտի վտանգի առջեւ: Եվ քանի՞ անգամ են մեր բժիշկները կանգնել դրամատիկ երկընտրանքի առջեւ՝ թողնե՞լ, թե՞ անդամահատել վերջույթը:

Ինստիտուտում մենք բախվում էինք նաեւ հոգեբանական մի դժվարին իրավիճակի: Ծանր ստրեսներին չէին դիմանում նաեւ տուժածների հարազատները, որոնք երբեմն նույնիսկ դիմում էին անզուսպ քայլերի (զոռով խցկվում էին վիրահատարան, անհարկի դժգոհում բժիշկներից եւ այլն): Թեեւ կարեկցողներ ինչքան ուզեք. մոսկվացիներից բացի՝ ամենատարբեր երկրներից, ամենատարբեր ազգությունների մարդիկ: Կարելի՞ է մոռանալ մոսկվացի բազմաթիվ հայ կանանց, որոնք հիվանդներին կերակրում էին իրենց իսկ պատրաստած հայկական կերակուրներով: Անմասն չէր մնում ոչ մի տեղացի հայ բժիշկ: Այդ տարին ամենաանողորմն էր իմ կյանքում:

Էթիկայի առումով տեղին չէ ասել, բայց փաստ է, որ նման տարերային աղետները բժիշկներիս համար մեծ փորձություն են ինչպես մասնագիտական ինքնահաստատման, այնպես էլ կատարելագործվելու իմաստով: Շատից դուրս շատ էին անսովոր իրավիճակները, երբ հարկ էր լինում պարզապես գործել հանպատրաստից: Թերեւս այս հանգամանքն էր հաշվի առել, ես ինձ թույլ եմ տալիս ասել, վաղեմի բարեկամս, այն ժամանակ արտգործնախարար Եվգենի Պրիմակովը, որն ինձ առաջարկեց կլինիկաներ բացել հեռպատերազմյան Քուվեյթում եւ Սերբիայում: Ի դեմ, շուտով լույս կտեսնի իմ մենագրությունը՝ նվիրված երկրաշարժի շրջանի մեր բուժմշակումներին:

10 տարի է անցել դաժան իրադարձությունից, Գյումրին ու Սպիտակը դեռ չեն բուժել վերքերը: Կարծում եմ, բոլորս պիտի արժանին մատուցենք նաեւ այն անձանց, ովքեր հենց առաջին օրից պետական մակարդակով հսկայական աշխատանք կատարեցին մարդկանց փրկելու, քաղաքներն ու գյուղերը փլատակներից մաքրելու գործում: Ես կառանձնացնեի Նիկոլայ Ռիժկովին, Սուրեն Հարությունյանին, Նորայր Մուրադյանին: Արդեն 10 տարի մենք Մոսկվայում միասին նշում ենք հերթական տարելիցը, այցելում ենք հայկական եկեղեցի, մոմ վառում եւ գլուխ խոնարհում զոհվածների հիշատակի առջեւ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մոսկվա
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր գյուտարար, Մոսկվայի տրավմատոլոգիայի եւ վնասվածքաբանության կենտրոնական ինստիտուտի մեծահասակների օրթոպեդիական վիրահատության կլինիկայի ղեկավար

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

1998-ի հունվարի 1-ից մինչեւ սեպտեմբերի վերջը Կոսովոյի եւ Մեսոխիայի տարածքում տեղի ալբանացիների կողմից իրականացվել են ահաբեկչական շուրջ 1200 գործողություններ: Դրանցից 616-ը կազմակերպված է եղել ընդդեմ Սերբիայի Հանրապետության ՆԳ նախարարության ոստիկանների եւ ծեռնարկությունների: Այդ գործողություններից 230-ն իրականացվել են Դեչանիում, 81-ը՝ Սրբիցայում, 76-ը՝ Կլինայում, 61-ը՝ Ջակովիցայում, 28-ը՝ Օրախովացում, 27-ը՝ Սուվա Ռեկայում, 15-ը՝ Կոսովսկա Միտրովիցայում, 13-ը՝ Պեչում եւ Իսոկում, 12-ը՝ Գլոգովացում, 8-ը՝ Շտիմլեում եւ Պրիզրենում, 6-ը՝ Պրիշտինայում եւ Ուրոշեւացում, 5-ը՝ Պոդուեւոյում, Վուչիտրնում, Լիպլյանում, 3-ը՝ Օբիլիչում, 2-ը՝ Կաչանիկում, 1-ը՝ Կոսովո պոլեում: Այդ հարձակումների ժամանակ զոհվել է Սերբիայի ՆԳ նախարարության 74 ոստիկանից, որոնցից 63-ը՝ գործող, իսկ 11-ը՝ պահեստային անձնակազմից, 166-ը ստացել են մարմնական ծանր վնասվածքներ, 116-ը՝ թեթեւ, իսկ 10 հոգի առեւանգվել են: Իրականացվել է նաեւ ահաբեկչության շուրջ 510 հարձակում խաղաղ բնակիչների, ինչպես նաեւ սահմանապահ շինությունների վրա, որոնց ժամանակ 81 մարդ զոհվել է (30-ը՝ սերբեր, 47-ը՝ ալբանացիներ, 3-ը՝ գնչուներ, իսկ մեկի ազգությունն անհայտ է): Ահաբեկիչները առեւանգել են 208 խաղաղացու: Հիշյալ 1200 հարձակումների ժամանակ ալբանացիների կողմից 592 անգամ գործածվել են նռնակներ, ռումբեր, հրացաններ եւ հրազենի այլ տեսակներ: Քրեական այս հանցագործություններին զուգահեռ արձանագրվել է նաեւ ալբանացիների կողմից խաղաղ բնակիչների ավտոմեքենաների ու փասաժիրների ստուգման, տների եւ այլ ծառայությունների վրա ավազակային հարձակման 31 դեպք: Իսկ եթե այդ ամենին ավելացնենք, որ ալբանական մաֆիան իր ձեռքն է վերցրել ու բացահայտ զբաղվում է զենքի ու թմրադեղերի առուծախով, պատկերն ավելի ամբողջական կլինի: Ոստիկանի գերտերությունները սասար են լինում այդ հանցագործություններին, իսկ երբ խոսք է գնում արդար պահանջատիրության ու պայքարի մասին, նույն գերտերությունները նախընտրում են համր ու կույր ձեւանալ՝ չդատապարտելով մարդկության հանդեպ գործվող ոճիրները:

Կոսովո. Ահաբեկչության նորօրյա պատկերը



Գծագրակերով ներկայացված են Հարավսլավիայի, Մակեդոնիայի եւ Հունաստանի տարածքների առանձին հատվածները, որոնք, ըստ ալբանացիների, պիտի միանան Ալբանիային՝ ստեղծելով «Մեծ Ալբանիա»:

Շումարիցե, Յասենովաց, Սումգայիթ, Կլեչկա...

Պրիշտինայից 10 կմ դեպի հարավ-արեւմուտք գտնվող Կլեչկա գյուղում Սերբիայի ՆԳ ոստիկանները 1998-ի օգոստոսի 27-ին հայտնաբերել են դիակիզարան, որտեղ ալբանացի ահաբեկիչները այրել են սպանված սերբերի դիակները: Դա ալբանացի ջարդարարների վերջին ու ամենամեծ հենակետն է եղել: Հետաքննությունը ցույց է տվել, որ ահաբեկիչները առեւանգված սերբերին հրազենով սպանել, ապա բարձր ջերմաստիճանում այրել են՝ իրենց բարբարոսությունների հետքերը թաքցնելու նպատակով: Այդ են վկայում մարդկանց մարմնի առանձին մասերի ու ոսկորների չայրված մնացորդները: Սերբիայի ՆԳ ոստիկանների ձերբակալած ալբանացի ոճրագործները խոստովանել են, որ պատկանում են, այսպես կոչված, «Կոսովոյի ազատագրական բանակ» կազմակերպությանը եւ անձամբ են մասնակցել շաս սերբերի տանջամահ անելուն եւ նրանց դիակները այրելուն: Այդքանից հետո միանգամայն բնական է միջազգային հանրությանը Հարավսլավիայի Միութենական Հանրապետության ներկայացրած պահանջը, համաձայն որի անհապաղ պիտի դատապարտվեն Կոսովոյում եւ Մեսոխիայում ալբանացիների կողմից սերբերի հանդեպ գործված աննախադեպ ոճիրները:

Ալբանական այս դաժանությունները մեզ հիշեցնում են Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին Ուզվիցում, Յասենովացում, Օսվենցիմում, Բուխենվալդում եւ համակենտրոնացման մյուս ճամբարներում գերմանացի նացիստների եւ խորվաթ ուստաշների իրականացրած վայրագությունները: Ցավոք, այսօր էլ որոշ երկրներ ոչ միայն հովանավորում, այլեւ ֆինանսավորում են ահաբեկչական նման գործողությունները, լայն հնարավորություն տալիս դահիճներին՝ անմեղ արյան մեջ շաղախելու իրենց ձեռքերը: Ու այսօր ոչ մի խոսք չի ասվել Յասենովացի համակենտրոնացման ճամբարում 1941-1945 թվականներին խորվաթների կողմից ամենադաժան մեթոդներով 700000 սերբերի ոչնչացման, 1941-ի հոկտեմբերի 21-ին Կրագուեւացի մերձակա Շումարիցե պուրակում գերմանացի ֆաշիստների կողմից 7000 սերբ ուսուցիչների գնդակահարման եւ նման տառապանքների մասին: Ոստիկանը կրկին լուռ է, ոչ ոքի սիրտը չի ցավում անմեղ զոհերի համար:

Կլեչկա գյուղում հայտնաբերված դիակիզարանը մեզանում ցավատանջ հուշեր է արթնացնում, տանում դեպի Սումգայիթ, որտեղ 1988-ի փետրվարին ադրբեջանցիները նույն մեթոդներով սպանում էին տեղաբնակ հայերին եւ, ի տարբերություն դիակիզարանում այրելուն, նրանց, հենց փողոցներում, բացահայտ այրում էին խարույկների վրա: Ադրբեջանցի բաշիբոզուկների ոճրագործությունները դատապարտող, ոստիկանի եւ ոչ մի դատարանում նրանց հանցագործ ճանաչող չեղավ...

* * *

Սերբերի վրա ճնշում գործադրելու Արեւմուտքի բոլոր ջանքերն ու մեթոդները սպառվել էին: Արեւմուտքը, սակայն, ամեն կերպ ցանկանում էր պատժել սերբերին՝ այս անգամ արդեն ժամանակակից 600 կործանիչ հրթիռներով, որոնք ուղղված էին Բելգրադին եւ նպատակամղված էին ոմբակոծելու տնտեսական, ռազմավարական նշանակության ամենակարեւոր կառույցները: Այդ ճակատագրական պահին վճռորոշ էր Ռուսաստանի եւ Անկախ պետությունների համագործակցության որոշ երկրների դիրքորոշումը: Արեւմուտքն, իհարկե, չէր կարող այդ նախազգուշացումներից հետո հաշվի չնստել նրանց հետ: Մահաբեր այդ ռումբերը կարող էին հերկել Սերբիայի խաղաղ երկինքը՝ առիթ դառնելով Բալկանյան համընդհանուր նոր պատերազմի: Բարեբախտաբար ամեն ինչ կանխվեց ժամանակին, հակառակ դեպքում երեւույթները կարող էին զարգացման աննախատեսելի ընթացք ունենալ եւ դժվար թե հնարավոր լիներ ցպել սխալը:

Կոսովյան հիմնահարցն այսօր էլ դեռ վերջնական լուծում չի ստացել: Առջեւում դժվար ու լարված, հավատի ու հույսի սպասումներով լի ժամանակներ են: Կասկածից վեր է, որ միայն խոհեմ խաղաղությունը կարող է փրկել իրավիճակը:

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վրաստանն առա՞ջ է անցնում իր հարեւաններից

ԹԲԻԼԻՍԻ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեկնաբանելով Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի քաղաքական կոմիտեի հանձնարարականի մասին Ստրասբուրգից ստացված հաղորդումը այս միջազգային կազմակերպությանը Վրաստանի հնարավոր անդամակցության վերաբերյալ՝ Վրաստանի նախագահի միջազգային հարցերով խորհրդական Շալվա Փիչխաձեն Փրայմ Նյուսին տված հարցազրույցում հայտարարել է, որ այս հանձնարարականը դարձել է Եվրախորհրդի ներկայացուցիչների կողմից Վրաստանի մարդասիրական ոլորտի դրության ավելի քան երկամյա դիտումների արդյունքը:

Նրա խոսքերով Վրաստանում չեն եղել քաղաքական ուժեր, որոնք կարողանային Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի զեկուցողներին հիմնավորված հայտարարել, թե իրենք դեմ են Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովին անդամակցելուն:

Դեռ ավելին, սույն առաջարկությունը պաշտպանել են նաեւ Հարավային Օսիայում, նշել է Վրաստանի նախագահի խորհրդականը: Նա գտնում է, որ Վրաստանն արդեն հունվարին, կամ ծայրահեղ դեպքում մինչեւ եկող տարվա գարուն կարող է դառնալ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի լիիրավ անդամ, եթե «որեւիցե անակնկալ տեղի չունենա»:

Փիչխաձեն նշել է, որ մի քանի ամիս առաջ ինքնակվել է որպես լիիրավ անդամներ Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը միաժամանակ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի կազմի մեջ մտնելու առաջարկությունը: Սակայն, Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի քաղաքական կոմիտեի կարծիքով, Վրաստանն այս պահին ըստ երեւույթին առաջ է անցել իր հարեւաններից, եւ այս փուլում ինքնակվում է լոկ նրա թեկնածությունը:

Դոմի պատը մեկնելու է Ուր

Ըստ ֆրանսիական «Մոնտե Կառլո» ռադիոկայանի (RMC) դեկտեմբերի 1-ի հաղորդագրության, Յունեսկոյում հավատարմագրված Իրաքի դեսպան Աբդուլ Ամիր Անբարին հայտարարել է, թե Հովհաննես-Պողոս երկրորդը պատը Իրաք է այցելելու հաջորդ տարվա սկզբին: Դեսպանն այս տեղեկությունը հայտնել է՝ ելույթ ունենալով «Իրաքի ժողովրդի հետ համերաշխությանը» նվիրված ժողովում, որը կազմակերպել էր Ֆրանսիական «Քրիստոնեական շարժումը»:

Մասնակցել են Ֆրանսիական Սենատի եւ Ազգային ժողովի մի շարք անդամներ: Անբարին ավելացրել է, որ սրբազան պատը 1991 թ.-ից վեր Իրաքի նկատմամբ որդեգրել է համերաշխ դիրքորոշում, որը գերազանցել է մի շարք իսլամական երկրների դիրքորոշումներին, քանզի պատը պահանջել է վերացնել Իրաքին պարտադրված շրջափակումը: Դեսպան Անբարին տեղեկացրել է նաեւ, որ Հովհաննես-Պողոս երկրորդը այցելելու է մարգարեների հայր Աբրահամի ծննդավայր Ուր քաղաք, որը ընդգրկվել է ամերիկյան ռմբակոծությունից:

Նույն աղբյուրի համաձայն, ժողովում իրենց հերթին ֆրանսիացի պատգամավորներն ու սենատորները միաձայն կարտուրել են Իրաքի շրջափակման վերացումը, զգուշացնելով նախ Սադդամ Հուսեյնին տարալուծելու փորձերից, քանի որ Բաղդադի ոստիկանի վարչակարգի այլընտրանքը արմատական (իմա՝ իսլամիստական) համակարգն է լինելու: Նրանք դատապարտել են Իրաքյան նախագահին գահընկեց անելու ամերիկյան փորձերը: Միեւնույն ժամանակ ֆրանսիական իշխանություններից պահանջել են դեմն առնել ԱՄՆ-ի այն ջանքերի, որոնք նպատակաուղղված են ոստիկանին իր բռունցքը պարտադրելուն: Ա. Մ.

Ասիական ճգնաժամը մեղմացել է

Ասիայի ֆինանսական ճգնաժամը, որը դեռ մի քանի շաբաթ առաջ սարսռեցնում էր ոստիկանի բյուրավոր քաղաքական գործիչների եւ տնտեսագետների, այսօր կարծես մի սովորական վերհուշ է դարձել: Արժութային բորսաները կրկին վերել է ապրում, ԱՄՆ-ի տնտեսական աճը շարունակվում է, բարելավվում է Ֆրանսիայի կացությունը...

Այդուհանդերձ, ոչ ոք չի համարձակվում վստահորեն պնդել, թե ճգնաժամը ավարտվել է: «Դժվար է պնդել, թե ճգնաժամը վերջացել է: Ավելի ճիշտ կլինի ասել, որ սպառնալիքների մի մասը կասեցվել է», գտնում է «Ռեմեկոդ» արդյունաբերական հասատության տնօրեն Միշել Դիդիեն: Հարավարեւելյան Ասիայի երկրներում հուսադրող նշաններ են ի հայտ եկել: Հարավային Կորեայում եւ Թաիլանդում տնտեսության վիճակը բարելավվում է նույնիսկ ավելի արագ տեմպերով, քան ակնկալվում էր: Լատինական Ամերիկայում եւս դրական միտումներ են նկատվում: Բրազիլիայում ֆինանսական լուրջ ճգնաժամից հնարավոր եղավ խուսափել Միջազգային արժութային հիմնադրամի միջամտության շնորհիվ:

«Ճգնաժամի թափը կոտրվել է, բայց բուն ճգնաժամը դեռ չի ավարտվել», հայտարարում է տնտեսագիտական հետազոտությունների «Մորգան Սթենլի Դին Ուիթր» հետազոտական հասատության տնօրեն Էրիկ Չեյնին: Իրոք, մտահոգության պատճառները շատ են. Բրազիլիայում իրավիճակի բարելավումը չի կարելի վերջնական համարել, Ճապոնիայում ֆինանսական ճգնաժամը տեւական բնույթ է ստացել, Ռուսաստանն ավելի ու ավելի շատ է խրվում խոսքի մեջ: Ինչպես «Էքսպրես» հանդեսի թղթակցին խոստովանեց Էրիկ Չեյնին, «դեռեւս հայտնի չէ Արեւմուտքի, մասնավորապես Լատինական Ամերիկայի բանկերի կրած կորուստների իրական ծավալը»: Նա երկյուղ ունի, որ այդ կորուստների պատճառով բանկերը կարող են առավել անկայուն դառնալ, ինչպես 90-ական թթ. սկզբներին՝ անշարժ կայքի տուկայում ծագած ճգնաժամից հետո:

Ասիական ճգնաժամի մեղմացումը մասնավորապես հույս է ներշնչում, որ եվրոպական երկրներում տնտեսական անկում չի արձանագրվի: Այսպես, Ֆրանսիայի տնտեսության նախարարությունն ակնկալում է, որ 1999 թվականի համար նախատեսված ներքին համախառն արդյունքի 2,7 տոկոս աճը կապահովվի: Ի դեպ, Միջազգային արժութային հիմնադրամի փորձագետները վերջերս Ֆրանսիայի համար կանխատեսեցին 2,8 տոկոս աճ: Այդ երկրի տնտեսության նախարարությունում խոստովանում են, որ արտահանող ծյուղերը տուժել են ներկա ճգնաժամից, բայց ներքին տուկան դինամիկ է. վերջին մեկ տարում Ֆրանսիայի տնտեսության առեւտրական հաշվեկշռում ստեղծվել է 298 հազար աշխատատեղ: Բայց դեռեւս հայտնի չէ, թե ինչպիսի ընդգրկում ու տեւողություն կունենա տնտեսական աճի դանդաղումն արդյունաբերողների համար եւ որքանով ապահով կլինեն նրանց ներդրումները: Բացի դրանից, ամերիկյան դոլարի փոխարժեքի հնարավոր անկումը կբուլացներ եվրոպական երկրների արտահանական կարողությունները:

Այսուհանդերձ կարելի է գրեթե վստահորեն ասել, որ ֆինանսական ճգնաժամի վատթարագույն օրերը մնացել են հետեւում:

Պ. Ք.

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

ՀԱՄԵՐԳԱՍԱՐԱՀ

Մեր տոհմիկ երգի մանուկ նվիրյալը

«Արամ Խաչատրյան» համերգասրահում հայ տոհմիկ երգարվեստի տոն էր: Օրվա հերոսը փոքրիկ երգիչ Գուրգեն Դաբաղյանն էր: Դա տասնամյա երգչի երկրորդ մենահամերգն էր մայրաքաղաքի ամենամեծ սրահում...

Լեփ-լեցուն դահլիճում հավաքվել էին հայ երգի երկրպագուներ, անվանի արվեստագետներ եւ մշակույթի գործիչներ, պատվավոր հյուրեր: Բեմ ելած տասնամյա երգիչը ժողգործիքների նվագախմբի նվագակցությամբ հանդիսատեսին էր մատուցում հայ գուսանական եւ ժողովրդական երգերի իր կազմած գեղեցիկ ու նրբաճաշակ փունջը՝ Շերամ, Սայաթ-Նովա, Ջիվանի, Ասոս... երգացանկ, որ վայել է միանգամայն հասուն երգիչների:



Հրաշամանուկի երգն այնպես էր ոգեւորել ներկաներին, այնքան ջերմ էր ընդունելությունը եւ այնքան առատ էին ծափերն ու ծաղիկները, որ ինքնաբուխ բեմ ելած ավագ սերնդի արվեստագետները գնահատանքի ամենաջերմ խոսքեր ասացին իրենց կրտսերագույն տաղանդավոր գործընկերոջ մասին: Երաժշտահան էդվարդ Միրզոյանը երգչի պատվին կատարեց «Երբ քեզ հետ են բարեկամներդ» կինոնկարի համար իր գրած վալսը, իսկ երգիչ Հովհաննես Բաղալյանը, նրա հետ երգելով հանրաճանաչ «Հորովելը», ասաց. «Երջանիկ եմ, որ Գուրգենի ժամանակակիցն եմ»...

Ո՞րն է փոքրիկ երգչի հաջողության գաղտնիքը. Դաբաղյան տոհմի երաժշտական ժառանգական հատկանիշնե՞րը, հորեղբոր՝ ճանաչված դուդուկահար Գեւորգ Դաբաղյանի, հոր՝ երգիչ Լեւոն Դաբաղյանի, պապի՝ ժողովրդական երգասաց Գուրգեն Դաբաղյանի փոխանցած սե՞ռը ազգային երաժշտարվեստի հանդեմ, թե՞ Հայաստանին պատուհասած ահեղ երկրաշարժի տարում ծնված հայ մանկանը նախախնամության կամքով տրված շռայլ շնորհը...

Հայրը պատմում է, որ ամեն ինչ սկսվել է «Սայաթ-Նովա» գեղարվեստական կինոնկարից: 4-5 տարեկան պստլիկ Գուրգենը՝ տան երեք երեխաներից կրտսերը, այնքան է տպավորվել կինոնկարի երգերից, որ ամեն կերպ ձգտել է՝ երգել, ու զարմանալիորեն ամեն ինչ գերազանց է ստացվել: Հետո բոլոր բարեկամներն ու ծանոթները լսել են ու զարմացել, էլի ու էլի են լսել եւ այս անգամ՝ հիացել... Հետո, երբ 7 տարեկան էր, առաջին անգամ՝ բեմ է բարձրացել արհեստավարժ երգիչների ու երաժիշտների հետ, 8 տարեկանում թողարկվել են առաջին ձայներիզը եւ լազերային սկավառակը, իսկ այս տարի առաջին անգամ արտասահմանյան հյուրախաղերի է մեկնել նախ Եգիպտոս, ապա Գերմանիա՝ մասնակցելով այդ երկրներում կազմակերպված հայ մշակույթի օրերին...

Օրերս Գուրգենը վերադարձավ նոր համերգային շրջագայությունից, հորեղբոր՝ Գեւորգ Դաբաղյանի ղեկավարած դուդուկահարների եռյակի հետ սփյուռքահայ երկրպագուների կողմից հրավիրվել էր Անգլիա, Բելգիա եւ Հոլանդիա: Փոքրիկ երգիչը հուզմունքով է պատմում հատկապես Լոնդոնի միջոյա հայկական դպրոցներից մեկում տեղի ունեցած համերգի մասին, երբ հասակակից հայ երեխաները շրջապատել են իրեն եւ իրենց իմացած հայերենով փորձել հաղորդակցվել, ծանոթանալ իր հետ...

Գուրգենն այսօր սովորում է մայրաքաղաքի Դավիթաշեն թաղամասի թիվ 199 միջնակարգ դպրոցի 4-րդ եւ թիվ 22 երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնի 3-րդ դասարաններում: Ժողովրդագուսանական երգերից բացի սիրում է նաեւ դասական երաժշտություն, սիրած երգիչներն են Շառլ Ազնավուրը, Լուչիանո Պավարոտին, Գոհար Գասպարյանը, որի անվան մեդալին է արժանացել հանրապետության պաշտպանության նախարարության կազմակերպած փառատոնում: Հրավեր ունի նաեւ Գերմանիայից: Պատրաստվում է նոր ձայներիզ եւ տեսահոլովակ:

... Համերգավարն արդեն հայտարարել էր երեկոյի ավարտը, բայց մասնակիցները չէին ուզում հեռանալ դահլիճից: «Դուքյունը փրկեց» նորից փոքրիկ երգիչը՝ ծրագրից դուրս հանպատրաստից երգելով Ջիվանու «Ճամփորդը» եւ բարին մաղթելով իրեն այնքան սիրող հանդիսատեսին:

Ներկաների կարծիքով այդ երեկո համերգասրահում հաղթեց տոհմիկ հայ երգը, որը հնչում էր մեր երգի մանուկ նվիրյալի շուրթերից...

ԱԲՏԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Էջմիածնի թատրոնը վերաբացվեց

Հանրապետությունում ճանաչում ու հեղինակություն ունեցող թատրոններից մեկը՝ Էջմիածնի Շառլ Ազնավուրի անվան թատրոնը, նույնպես վերջին տարիներին կանգնել էր դժվարությունների առջեւ: Ավելի քան 45-ամյա ստեղծագործական բեղուն ճանապարհ անցած եւ շուրջ 100 ծանրակշիռ բեմականացումներ իրականացրած թատրոնը սկսած 95-ից, չէր կարողանում հանդիսատեսի հետ հանդիպել գոնե մեկ անգամ: Շուկայական հարաբերությունները, համընդհանուր անտարբերությունն անգործության էր մատնել նաեւ այս թատերախմբին, որի ամեն մի ներկայացումը հանդիսատեսը ընդունում էր բացառիկ ջերմությամբ: Սունդուկյանի «Պեպո», Շիրվանզադեի «Նամուս», Զարյանի «Վրեժ», Պեմիրճյանի «Քաջ Նազար», Պարոնյանի «Ամուսնություն», Ռանեցի «Քրեական տանգո», Չեխովի «Առաջարկություն», Ֆրանսի «Համր կինը», Բորյանի «Նույն հարկի տակ», Պապայանի «Աշխարհն, այո՛, շուռ է եկել» եւ մի շարք այլ ներկայացումները հիմնարար դեր խաղացին դերասանների մի հրաշալի բույլ հայտնաբերելու գործում: Թատերական արվեստի մակարդակը կոլեկտիվին հնարավորություն ընձեռեց հանդես գալու ոչ միայն մայրաքաղաքի, այլեւ Մոսկվայի, Ռոստովի, Քիշինյովի, Թբիլիսիի, Սոֆիայի հանդիսատեսի առջեւ: 4 անգամ նվաճել է դափնեկրի կոչում, կրկնակի անգամ արժանացել ոսկե մեդալների: Բարեբախտաբար հանդիսատեսի եւ սիրված դերասանների բաժանումը երկար չտեւեց. Արմավիրի մարզի կրթության վարչության, անձամբ մարզպետ Ալբերտ Հերոյանի նյութական ու բարոյական աջակցության շնորհիվ նորից բացվեցին թատրոնի վարագույրները:

Թատերախումբը բեմադրեց Գեւորգ Գեւորգյանի «Սկեսուրի գանձերը» պիեսը: Կոմիտասի անվան մշակույթի պալատը նորից լեփ-լեցուն էր հանդիսատեսով: Իրենց անթերի խաղով նորից հիացմունք պատճառեցին դերասաններ Իզաբելա Գեւորգյանն ու Նորայր Հովհաննիսյանը, Սեդա Գրիգորյանն ու Գրիգոր Ամյանը, Մարինե Գրիգորյանն ու Թամարա Պետրոսյանը:

Իսկ հանդիսատեսն առաջիկայում կունենա հնարավորություններ առնչվելու նոր բեմականացումների հետ:

Բեմականացմանը ներկա էին ինչպես փոխմարզպետ Ա. Մխիթարյանը, այնպես էլ կրթության ու մշակույթի վարչության պատասխանատու աշխատողները:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՊՐԱՀԱ

Հովիկ Մուրադյանը՝ բրոնզե մեդալակիր

Երեսունչորսամյա երեւանցի նկարիչ Հովիկ Մուրադյանն արդեն հինգ տարուց ավելի ապրում եւ ստեղծագործում է Չեխիայում: Դեռեւս Հայաստանում նա մասնակցել է մի քանի ցուցահանդեսների, 1985-ին ժուռնալիստների միությունում բացվել է նրա անհատական ցուցահանդեսը: Սակայն միանշանակորեն կարելի է ասել, որ նրա համար առավել բեղմնավոր էր «չեխական» շրջանը: 1993-1998 թ. նա մասնակցել է Չեխիայում, Նիդեռլանդներում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Բելգիայում եւ Ֆրանսիայում բացված տասնհինգից ավելի ցուցահանդեսների, որոնցից երկուսն՝ անհատական (Պրահա եւ Ուստի նադ Լաբեմ քաղաքներում): Այս տարին նշանակալից էր նաեւ այն առումով, որ Ֆրանսիայում նա շահեց Salon de la Rochelle-ի բրոնզե մեդալը: Իսկ ամռանը Պրահայում բացված Վիշեհրադ-98 պատմական բնույթի ավանդական ցուցահանդեսում շնորհաշատ Մուրադյանը ներկայացված միակ հայ նկարիչն էր: «Ազգի» ընթերցողներին ենք ներկայացնում նկարչի «Փորձություն» աշխատանքը:



Հ. Ա.
Պրահա

ԱՄՆ

«Լռության լսելի ձայնը»

Վարդենու նկարների ցուցահանդեսը Բոստոնում

Վերոհիշյալ խորագրով է արվեստասեր հասարակայնությանը ներկայացել ճանաչված արվեստագետ Վարդենին, որի նկարների ցուցահանդեսն է նոյեմբերի 15-ին բացվել Բոստոնի Պիանո Ֆորտե դահլիճում, հաղորդում է «Արմինյեն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

«Վերնագիրն արտացոլում է թե՛ իմ ժողովրդի, թե՛ իմ՝ որպես մոր եւ արվեստագետի կյանքի պատմությունը», մեկնաբանել է եւ ավելացրել, որ մեր պատմության ընթացքում շատ անգամներ են մեր ժողովրդին լռության մատնել, իսկ արվեստում՝ եթե որեւէ մեկն անհանդուրժողական մոտեցում է ցուցաբերում, նրան շատ հաճախ մեկուսացնում են շրջապատից, որը նույնպես լռեցնելու տարբերակ է:

Ցուցահանդեսում, որը շարունակվելու է մինչեւ առաջիկա տարվա գարուն, ներկայացվել են 1992-ից մեր օրերը կատարված յուղանկարներն ու գծանկարները: Դրանց ոճական արտահայտությունները տարբեր են, սակայն հարում են ավելի շատ էքսպրեսիոնիզմին:

Վարդենին, ինչպես հիշում են «Ազգ»-ի ընթերցողները, վերջերս եղել է Հայաստանում, եւ «Միրոր սփեքթեյթրի» գրաստենյակում զրուցելիս նշել, որ «դա իմ առաջին այցելությունն էր, եւ ես շատ ոգեշնչված եմ: Մանկուց երազել էի լինել հայրենիքում: Ամեն ինչ շատ դյուրիչ էր»: Չնայած Հայաստանում ցուցահանդես չի կազմակերպել, նա իր նվիրած կտավներից մեկը, այնուամենայնիվ, ցուցադրված է տեսել ժամանակակից արվեստի թանգարանում: «Իմ նպատակը ցուցադրվելը չէ առայժմ, այլ նկարելը այնտեղ, ասել է նա: Ոչ թե երեւանում, այլ գյուղական վայրերից մեկում, մեր ներքին կյանքի մի անբաժանելի մասնիկը դարձած լեռների եւ ժայռերի սոռոտում: Հայաստանը մի վերացական աշխարհ է: Դու այնտեղ Արեւելքում ես, բայց, միեւնույն ժամանակ, նաեւ արեւմտյան մտածողության ու գիտական մակարդակների ոլորտներում»:

Հայաստան այցելությունից հետո նա մեկնել է նաեւ Կիպրոս եւ Հունաստան, եւ իր համար մի նոր աշխարհ բացել: Եվրոպական մի շարք երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում ու Իսպանիայում ցուցադրվելուց հետո այժմ որոշել է ցուցադրվել արեւելյան երկրներում:

Հիշեցնենք, որ Վարդենին ծնվել է Սամարկանդում: Տասնվեց տարեկանում տեղափոխվել է Միացյալ Նահանգներ՝ հաճախելու Կալիֆորնիայի «Կել արտ» արվեստների դպրոցը: Առաջին զավակն ունենալուց հետո Ֆլորիդա է մեկնել, որտեղ Կենտրոնական Ֆլորիդայի համալսարանում շարունակել է բարձրագույն ուսումը չեխ նկարիչ Գոդենկի հսկողության ներքո: Այնուհետեւ, 1979-ին ավարտելուց հետո, վերջնականապես հաստատվել է Մասաչուսեթսում:

Ըստ լրատվության, Բերքլիի երաժշտական դպրոցի պրոֆ. Վուկ Կուլենովիչը դեկտեմբերին հանդես է գալու Վարդենու կտավների հիման վրա գրված իր յուրահատուկ երաժշտական ստեղծագործությունների կատարմամբ:

Հ. Ծ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԲՈՆՑՔԱՍՄԱՐՏ

Ամփոփվեցին չորս տարվա արդյունքները

ԱԻԲԱ-ի հերթական կոնգրեսը

Թուրքիայի Անթալիա քաղաքում անցկացվեց միջազգային ասոցիացիայի (ԱԻԲԱ) 14-րդ կոնգրեսը: Այն բավականին ներկայացուցչական էր. կոնգրեսի աշխատանքներին մասնակցեցին ԱԻԲԱ-ի անդամ 194 երկրներից 121-ի ներկայացուցիչները (համեմատության համար նշենք, որ նախորդ 13-րդ կոնգրեսին ներկա էին 80 ազգային ֆեդերացիաների անդամներ):

Հայաստանից կոնգրեսի աշխատանքներին մասնակցեցին հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահ Դերենիկ Գաբրիելյանը եւ գլխավոր քարտուղար Լեւոն Հովհաննիսյանը:

Նախ Գաբրիելյանը մասնակցեց բոնցքամարտի եվրոպական ֆեդերացիայի տեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին: Այստեղ հիմնականում քննարկվեց մարզաձեւի կանոնադրությունում փոփոխություններ մտցնելու հարցը: Դա հատկապես վերաբերում է պատանեական եւ երիտասարդական բոնցքամարտին:

Միջազգային ֆեդերացիայի կոնգրեսում հաջվեությամբ հանդես եկան նախագահը, գլխավոր քարտուղարը, տարբեր հանձնաժողովների նախագահներ: Ամփոփվեցին վերջին չորս տարվա ընթացքում կատարված աշխատանքի արդյունքները: Այնուհետեւ տեղի ունեցան ԱԻԲԱ-ի ղեկավար կազմի ընտրություններ:

Ասենք, որ միջազգային ասոցիացիայի կոնգրեսից առաջ Ռուսաստանի բոնցքամարտի ֆեդերացիան հանդես էր եկել բաց նամակով, որում անվստահություն էր հայտնում գործող նախագահ Անվար Չաուդրիին (Պակիստան): Ավելին, ռուսները հայտարարել էին, որ կոնգրեսում, որպես այլընտրանք, այդ պաշտոնում առաջադրելու են ԱԻԲԱ-ի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Կառլ-Հայնց Վերի (Գերմանիա) թեկնածությունը: Նամակում նշանք կոչ էին անում աջակցել իրենց եւ քվեարկել Վերի օգտին: Սակայն...

Կոնգրեսում տեղի ունեցած ընտրություններում ԱԻԲԱ-ի նախագահի պաշտոնում վերընտրվեց պակիստանցի պրոֆեսոր Չաուդրին: Ասոցիացիայի գլխավոր քարտուղար դարձավ ամերիկացի Բեկկերը:

Անթալիայի կոնգրեսում ելույթ ունեցավ եւ մի շարք առաջարկություններով հանդես եկավ Դերենիկ Գաբրիելյանը: Դրանցից մեկը վերաբերում էր մենամարտերի տեւողությանը: Մեր հանրապետության ներկայացուցիչն առաջարկեց 5 ռաունդի փոխարեն անցկացնել 4-ը՝ կրկին 2 րոպե տեւողությամբ: Այս առաջարկն ընդունվեց, եւ 1999 թվականից սկսած սիրողական մրցումներում մենամարտերը կանցկացվեն 4 ռաունդից:

Գաբրիելյանը եւ Հովհաննիսյանը հանդիպեցին գլխավոր քարտուղար Բեկկերին եւ առանձնազրույց ունեցան նրա հետ: Հանդիպման ընթացքում բազմաթիվ հարցեր քննարկվեցին: Մասնավորապես, պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ միջազգային ասոցիացիան կօգնի մեր հանրապետության ֆեդերացիային տրամադրելով մարզագույք, մարզահագուստ:

ՖՈՒՏԲՈԼ

Մադրիդի «Ռեալի» հաղթանակը

Ճապոնիայի մայրաքաղաքում անցկացվեց միջմայրցամաքային գավաթի խաղարկությունը

Տոկիոյի Ազգային մարզադաշտում անցկացվեց Միջմայրցամաքային գավաթի 37-րդ խաղարկությունը:

Աշխարհի ակումբային թիմերի չեմպիոնի տիտղոսի համար մրցասպարեզ էին մտել պատվավոր մրցանակի խաղարկության առաջին՝ հաղթող, եվրոպական չեմպիոնների գավաթակիր իսպանական «Ռեալ» (Մադրիդ) եւ Լիբերտադորեսի գավաթի խաղարկության հաղթող, նմանօրինակ մրցումների նորեկ, բրազիլական «Վասկո դա Գամա» (Ռիո դե Ժանեյրո):

Հանդիպումը չափազանց մեծ հետաքրքրություն էր առաջացրել: Այն հետաքրքրում էին բազմաթիվ երկրների շուրջ 100 հեռուստակայաններ, ինչի շնորհիվ պայքարին հետեւելու հնարավորություն ունեցան աշխարհի ավելի քան 1 միլիարդ հեռուստադիտողներ: Նրանք, ինչպես նաեւ Տոկիոյի մարզադաշտում հավաքված 55 հազար ֆուտբոլասերները, ականատես եղան շատ լարված ու գրավիչ խաղի:

Հանդիպումից առաջ կողմերի հնարավորությունները մոտավորապես հավասար էին գնահատվում: Բրազիլացիները չափազանց ցածր (10-րդ) տեղ են գրավել երկրի առաջնությունում, իսկ իսպանացիներն այնպես էլ հաջող չէին անցկացրել Չեմպիոնների լիգայի եւ իրենց երկրի առաջնության խաղերը: Բացի այդ, խաղից առաջ նրանք նաեւ կազմի խնդիր ունեին: Սակայն կարողացան հանդիպմանը մասնակցել վնասվածքների պատճառով երկար ժամանակ խաղադաշտ չմտած պաշտպաններ Մանուել Սանչիսը եւ Քրիստիան Պանուչչին: Պետք էր կարծել, որ երկու թիմերի ֆուտբոլիստներն էլ շատ ջանքեր կթափեն ոչ միայն պատվավոր մրցանակին տիրելու, այլեւ իրենց վարկը բարձրացնելու համար:

Առաջին խաղակեսն անցավ «Ռեալի» նվազագույն առավելությամբ: Նրանց խաղացողներն ավելի շատ եւ ավելի սուր էին գրոհում: Այդ-պիսի գրոհներից մեկի ժամանակ, 25-րդ րոպեին, «Ռեալի» բրազիլացի պաշտպան Ռոբերտո Կառլոսը շեշտակի հարված կատարեց մրցակցի դարպասին: Գնդակը դիպավ «Վասկո դա Գամայի» խաղացող Նազայի գլխին եւ... հայտնվեց ցանցում: Երկրորդ խաղակեսն անցավ մոտավորապես հավասար պայքարում: Երկու թիմերն էլ սուր գրոհներ էին կազմակերպում, հմտորեն պաշտպանվում: Խաղի 57-րդ րոպեին հաշիվը հավասարվեց: «Վասկո դա Գամայի» գրոհը չափազանց գեղեցիկ հարվածով եզրափակեց երիտասարդ Ժունինյոն: 1-1 հաշիվ: Հանդիպումը ավարտվեց, թեեւ կողմերը գոլ խփելու նոր հնարավորություններ ունեցան: Խաղավարից 7 րոպե առաջ փայլեց «Ռեալի» 21-ամյա հարձակվող Ռաուլը: Սանալով իր խաղընկեր Կլարենս Չեդորֆի փոխանցումը նա ներխուժեց բրազիլացիների տուգանային հրապարակ, խաբս տվեց նրանց երկու պաշտպաններին, այնուհետեւ նաեւ դարպասապահին ու գնդակն ուղարկեց մրցակից թիմի դարպասը:

Չիլիացի մրցավար Մարիո Սանչիս Յանտենի սուլիչն արձանագրեց Մադրիդի «Ռեալի» հաղթանակը 2-1: Խաղից անմիջապես հետո Տոկիոյում սպացվեց Իսպանիայի թագավոր Խուան Կառլոս Առաջինի շնորհավորական հեռագիրը, որում այսպիսի տողեր կային. «Դա ամբողջ իսպանական սպորտի մեծագույն հաղթահանդեսն էր»:

Հաղթողներն այս խաղում հանդես եկան հետեւյալ կազմով. **Իլգներ**, Պանուչչի, Սանչիս, Հիեռո, Ռոբերտո Կառլոս, Սանս, Չեդորֆ, Ռեդոնդո, Ռաուլ, Միյատովիչ, **Սավիո**: Խաղավերջում փոխարինման մտան նաեւ **Յառնին, Շուկերը**:

«Ռեալին», Միջմայրցամաքային գավաթից բացի, հանձնվեց նաեւ «Տոյոտայի գավաթը»: 1980 թվականից սկսած ավտոմեքենաշինության ճապոնական հսկա ընկերությունն ինքն է սահմանել այս մրցումների կազմակերպչի դերը (պատահական չէ, որ արդեն 19-րդ անգամ աշխարհի ուժեղագույն ակումբային թիմը որոշվում է Տոկիոյում): Բացի այդ հանդիպման լավագույն խաղացող ճանաչված իսպանացի Ռաուլին հանձնվեց «Տոյոտա» մակնիշի նորագույն ավտոմեքենա:

Նշենք նաեւ, որ նախորդ երեք խաղարկություններն էլ ավարտվել էին եվրոպական թիմերի հոլանդական «Այաքսի», իտալական «Յուվենտուսի», գերմանական «Բորուսիայի» հաղթանակով: Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ առավելությունը հարավամերիկացիների կողմն է. նրանք պատվավոր մրցանակը շահել են 20 անգամ, իսկ եվրոպացիները 17:

ՎՈԼԵՅԲՈԼ

Ընտրվեց նոր նախագահ

Տեղի ունեցավ վոլեյբոլի հանրապետական ֆեդերացիայի արտահերթ կոնֆերանսը:

Քանի որ ֆեդերացիայի նախագահ Ռայիկ Ղուկասյանը հրաժարվել էր ղեկավարել կազմակերպությունը, ապա կոնֆերանսի ժամանակ նախագահի ընտրություններ անցկացվեցին:

ՀՀ վոլեյբոլի նոր նախագահ միաձայն ընտրվեց Ռոբերտ Չանիբեկյանը: Նա սպորտի վարպետ է, երկար տարիներ խաղացել է վարպետ թիմերում, Հայաստանի հավաքականում: Չանիբեկյանը ներկայումս մայրաքաղաքի Կենտրոն համայնքի մարզադպրոցի թիմի եւ հանրապետության չեմպիոն «Հայքի» գլխավոր մարզիչն է:

Ուսանողական խաղերի ծրագրով

Երեւանում, պետհամալսարանի երկու մարզադահլիճներում անցկացվեցին հանրապետական ուսանողական խաղերի ծրագրով վոլեյբոլի մրցումները:

Տղաների մրցաշարում, որտեղ հանդես եկան ութ թիմեր, առաջին տեղը գրավեց եւ ուսանողական խաղերի չեմպիոն հռչակվեց ֆիզկուլտուրայի ինստիտուտի մարզական ակումբի առաջին թիմը: Երկրորդ եւ երրորդ մրցանակակիրներ դարձան համապատասխանաբար Երեւանի պետական համալսարանի եւ Հերացու անվան պետական բժշկական համալսարանի վոլեյբոլիստները:

Աղջիկների մրցաշայքարին երեք թիմ մասնակցեց: Խաղերի հաղթող դարձան ՖԻՄՍ-ի վոլեյբոլիստուհիները: Հաջորդ տեղերում են Ստեփանակերտի եւ Երեւանի համալսարանների թիմերը:

Ուրախալի է Արցախի ներկայացուցիչների մասնակցությունը: Նշենք, որ մնացած 10 թիմերը միայն երեւանյան բուհերն էին ներկայացնում: Իսկ ինչո՞ւ հանրապետական խաղերում հանդես չեկան մյուս քաղաքների վոլեյբոլիստները: Եվ մի՞թե տարօրինակ չէ, որ աղջիկների մրցաշարին ընդամենը երեք թիմ մասնակցեց:

ԲՈՆՑՔԱՍՄԱՐՏ

Հոլիֆիլդը բռունցք է քարի տալիս

Եկող տարվա մարտի 13-ին Նյու Յորքի «Մեդիսոն սկվեր գարդեն» մարզադպրոցում կանցկացվի ծանրաքաշային բոնցքամարտիկներ Էվանդեր Հոլիֆիլդի (ԱՄՆ) եւ Լենոքս Լյուիսի (Անգլիա) մենամարտը: Երկու բոնցքամարտիկներն էլ աշխարհի չեմպիոնի կոչում են կրում, սակայն՝ տարբեր միությունների վարկածով: Որոշվել է, որ Նյույորքյան մրցաշայքարի հաղթողն աշխարհի ուժեղագույնը կճանաչվի:

Օրերս Հոլիֆիլդը եւ Լյուիսը հանդիպեցին եւ պրոֆեսիոնալների մարտերի հայտնի կազմակերպիչ Դոն Քինգի հետ ներկայացան մարզական հասարակայնությանը: Հսկայական մարզադահլիճում անցկացված գունագեղ շոուի ժամանակ մարզիկները խոսեցին առագա մենամարտի, իրենց հնարավորությունների մասին: Հոլիֆիլդը հայտարարեց, որ «Մեդիսոն սկվեր գարդենում» երկու ելք է հնարավոր՝ կամ ինքը «պարզապես» կհաղթի, կամ էլ նոկաուտի կենթարկի մրցակցին: Երրորդ տարբերակ գոյություն չունի: Լյուիսը շատ ավելի զուսպ արտահայտվեց կողմերի հնարավորությունները գնահատելիս:

ՄՈՏՈՍՊՈՐՏ

«Յամահայի» եւ Բիաջիի դարձերը

Մոտոցիկլ արտադրող ճապոնական հանրահայտ «Յամահա» ընկերությունը եւ իտալացի մրցարշավորդ Մաֆս Բիաջին պայմանագիր են կնքել: Կողմերը շատ գոհ են պայմանագրից: Դրա համաձայն՝ մարզիկն այսուհետ հանդես կգա 500 խսմ տարողության շարժիչով «Յամահա» մոտոցիկլով եւ դրա համար 6 մլն դոլար կստանա:

Մաֆս Բիաջին անցյալ տարի նվաճել է աշխարհի չեմպիոնի կոչումը՝ հանդես գալով 250 խսմ շարժիչով մոտոցիկլով: Այս տարի նա աշխարհի առաջնությանը մասնակցեց ավելի հզոր մեքենայով, երկար ժամանակ առաջատար էր, սակայն երբ ավարտին երկու փուլ էր մնացել, գիջեց դիրքերը: Գուցե «Յամահայո՞վ» կկարողանա հաջողության հասնել:

Բիաջին «Սուզուկի» մրցարշավարանում արդեն փորձարկել է իր համար նոր մոտոցիկլը: Իսկ պաշտոնական մրցումներում «Յամահայով» նա առաջին անգամ հանդես կգա եկող տարվա ապրիլին անցկացվելիք «Մալայզիայի մեծ մրցանակի» խաղարկությունում:

ՍԿԱՆԴԱԼ

Հանդիպումը չավարտվեց

Խոշոր սկանդալով ավարտվեց Նորվեգիայում անցկացված գնդակով հոկեյի եվրոպական երկրների չեմպիոնների գավաթի 25-րդ խաղարկության եզրափակիչը:

Ռուսաստանի «Վոդնիկ» եւ Շվեդիայի «Վեսթերոս» թիմերի հանդիպման ժամանակ, երբ խաղավարին մի քանի րոպե էր մնացել, եւ հաշիվը 5-4 էր՝ հօգուտ ռուսների, նորվեգացի մրցավարը մեկը մյուսի ետեւից խաղադաշտից հեռացրեց «Վոդնիկի» երեք հոկեյիստների: Շվեդները կարողացան հավասարեցնել խաղի հաշիվը: Իսկ երբ մրցավարը հեռացրեց «Վոդնիկի» նաեւ չորրորդ խաղացողին, արխանգելսկցիների գլխավոր մարզիչ Վլադիմիր Յանկոն իր թիմը հանեց ասպարեզից:

Ռուսական ակումբի ներկայացուցիչները բողոք ներկայացրին ոչ օբյեկտիվ մրցավարության կապակցությամբ: Սակայն բողոքը չընդունվեց: Չեմպիոնների գավաթի խաղարկության հաղթող հռչակվեց շվեդական թիմը:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՈՍՅՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՕՐՎԱ ԻՐԱՏԵՍԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Երկիր, որ կարողացել է վերացնել իր արդյունաբերությունը»

Սկիզբը էջ 1

Խորհրդարանն ընդունացավ կառավարության դեմ, որն առանց ԱԺ-ում վավերացված օրենքի արդեն մշակել է խաղի իր կանոնները: ՀԿԿ խմբակցության անդամ Խորեն Սարգսյանը զայրույթով արձանագրեց. «ԱԺ-ն կառավարության համար թաքնիկակ է, չեմ ասում միք սրբելու, այլ գոնե ճակաս սրբելու համար»: Սերգո Երիցյանը պատկերավոր համեմատություններից անցավ գործնական կյանքին՝ առաջարկելով կառավարությանը վարկով կամ աղառիկ տնտեսավարողներին տրամադրել հսկիչ-դրամարկղային մեքենաներն այնպես, որ տվյալ ծեռներեցը կարողանա մեկ տարվա ժամկետում մարել իր պարտքը՝ տեր դառնալով բաղձալի մեքենային: Առաջարկվեց նաեւ սահմանել հստակ ժամանակացույց՝ փոքր առեւտրային միավորներին եւ հատկապես Հայաստանի մարզերում գտնվող տնտեսավարողների համար սահմանելով ժամանակային որոշակի հեռանկար: Զավեն Հարությունյանը, իբրեւ էլեկտրասարքավորումների գործարանի տնօրեն՝ արձանագրեց իր վիրավորանքը. «Ես՝ որպես արտադրող, շատ վիրավորված եմ, որ այսքան ժամանակ չփորձեցին տեղում սկսել հսկիչ մեքենաների արտադրություն կամ համատեղ ձեռնարկություն ստեղծել»: Պատգամավորը երիցս իրավացի է՝ եթե կառավարությունն ունենար արդյունաբերական քաղաքականություն, վիճակն այսպիսին չէր լինի:

«Կառավարությունը ստում է եւ անպատիժ մնում»

Պատգամավոր Հերմինե Նաղդալյանը բանաձեւեց օրվա գնահատականը. «Մենք մի երկիր ենք, որը կարողացել ենք բացարձակապես վերացնել իր արդյունաբերությունը»: Դարձել է բուդկաների երկիր եւ ուզում ենք բուդկաներից գանձված գումարներով բյուջե փակել: Երբ մարդը մերկ է, լուրջ չէ մտածել ֆիրմային եւ մոդային հանդերձների մասին: Այո, հեռու է հայ առեւտրականի ճամփան մինչեւ եվրոպական բիզնեսմենը»: Հերմինե Նաղդալյանը հիշեցրեց հաստատագրված վճարների մասին օրենքի ողիսականը՝ ԱԺ-ն վիճում էր դրանց նպատակահարմարության մասին, իսկ կառավարությունն արդեն որոշել էր՝ ով է բերելու մեքենաները, որքան եւ ինչ գնով. «Այսօր փորձում են ԱԺ-ի վրա գցել պատասխանատվությունը: Պարոնայք, որքա՞ն կարելի է գալ երկրի օրենսդիր մարմին եւ սուտ խոսել ու անպատիժ մնալ», հեռաձայնվեց պատգամավորը: Իսկ ԱԺ-ն իրոք այդպես էլ չկարողացավ կառավարությունից պարզել, թե ինչ կտա այս օրենքը պետբյուջեին: Հերմինե Նաղդալյանը շեշտեց, որ դրսից գնելով հսկիչ-դրամարկղային մեքենաները, մենք 10 մլն-ից ավելի արջանառու միջոցներ ենք արտահանելու, իսկ ինչո՞ւ փողը արտահանենք, եթե հնարավոր է տեղում ներդնել: Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նշում էր, թե 1 մլն դոլարով հնարավոր է 200 աշխատատեղ ստեղծել, պարզ հաշվարկ է, թե այդ 10 մլն դոլարով որքան աշխատատեղ կստեղծվի, եւ ճիշտ քաղաքականության դեպքում ինչ զարգացում կարող է տեղական արտադրությունը: Պատգամավորն առաջարկեց հսկիչ-դրամարկղային մեքենաներ ներմուծողների համար հայտարարել մրցույթ, որը կբացահայտի նվազագույն նպատակահարմար գինը, այնուհետեւ վարկային ծրագրերի միջոցով տեղում սկսել այդ մեքենաների արտադրությունը:

Մեծ ընդմիջումից հետո պատգամավորներին բաժանվեց օրենքի մեկ այլ տարբերակ՝ փոփոխված վերնագրով, եւ որքան էլ ԱԺ խոսնակ Խոսրով Հարությունյանը փորձեց զորավիգ լինել ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար էդ. Սանդոյանին, պատգամավորներն անհողդողդ էին: էդ. Սանդոյանը ստիպված էր 15 օրով հետաձգել քվեարկությունը:

Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին օրենքն ընդունվեց արդեն այլ մթնոլորտում. ԱԺ-ն որոշեց 1999 թ. հունվարի 1-ից Հայրենական պատերազմի 19 հազար վետերաններին ամսական վճարել 1750 դրամ պատվովճար, որը 2000 թ. հունվարի 1-ից կդառնա սահմանված բազային կենսաթոշակի կրկնապատիկը: Հիշեցնեմ՝ բազային կենսաթոշակը 2200 դրամ է: ԱԺ-ն հավանություն տվեց նաեւ փաստաբանական գործունեության մասին օրենքի լրացմանն ու «Զորահավաքային նախապատրաստության եւ զորահավաքի մասին» օրենքին: Այսօր պատգամավորաց դահլիճ կներկայացվեն պաշտոնային դրույքաչափերի օրենքները՝ ԱԺ-ն դարձյալ երկընտրանքի առջեւ է՝ բարձրացնե՞լ սեփական եւ իշխանության մյուս թեւերի աշխատավարձը, երբ վետերաններին տրվում է խղճուկ պատվովճար՝ 1750 դրամ, թե՞ բավարարվել եղածով:

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ Արեւելք-Արեւելք ծրագիրը

հայտարարում է Հայաստանում սոցիալ-մշակութային եւ գիտական ոլորտի հավաքի (սեմինար, գիտաժողով, գործնական պարապմունքներ եւ այլն) կազմակերպման մրցույթ:

Արեւելք-Արեւելք ծրագրի հիմնական խնդիրն է Արեւելյան Եվրոպայի եւ նախկին Խորհրդային Միության երկրների միջեւ հարթել համագործակցության եւ հաղորդակցման նոր ճանապարհներ, որոնք հնարավորություն կտան բացահայտել անցումային շրջանին հատուկ ընդհանուր խնդիրները եւ մշակել հնարավոր լուծման տարբերակներ:

Մրցույթին կարող են մասնակցել կազմակերպություններ եւ անհատներ, որոնց ծրագրի առաջարկները կհամապատասխանեն Արեւելք-Արեւելք ծրագրի հիմնական խնդրին:

Առաջարկվող բնագավառներն են՝
Կրթական հաստատություններ
Հաստատություններ երեխաների համար
Առողջապահական համակարգեր եւ հասարակական առողջապահություն
Մարդու իրավունքներ եւ արդարադատություն
Դեմոկրատական հասարակության ինստիտուտներ

Առաջարկվող ծրագրի բյուջեն չպետք է գերազանցի 15000 ամերիկյան դոլարը:

Անհրաժեշտ է ներկայացնել ծրագրի անգլերեն եւ հայերեն-ռուսերեն տարբերակները:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. դեկտեմբերի 28-ը:

Դիմումների ձեւերը կարելի է ստանալ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակում:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Հասցեն՝ Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271713, 151088

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 4-ին, ժամը 15-ին գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա հուշ-ցերեկույթ նվիրված գրող **ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ** ծննդյան **65**-ամյակին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ի ԼՈՒՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ԱԺ պատգամավոր, ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար Դավիթ Վարդանյանի հետ:

Հանդիպումը կկայանա ուրբաթ, դեկտեմբերի 4-ին, ժ 11.00-ին մամուլի ազգային ակումբում (Արշակունյաց 2, 10-րդ հարկ, հեռ. 569158):

ԱՐՄԵՆՊՐԵՍԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1999 թվականի համար Արմենպրես պետական փակ բաժանորդագրություն առաջարկում է.

- Տարաբնույթ նորությունների ժապավենները՝ **հանրապետական, միջազգային, տարածաշրջանային** (հայերեն եւ ռուսերեն):
- **Armenpress Bulletin**-նորությունների ժապավեն անգլերեն:
- **Մասնագիտացված տնտեսական ժապավեն**՝ հանրապետական եւ միջազգային (հայերեն, անգլերեն ու ռուսերեն):
- **Հանրապետական մամուլի ամենօրյա տեսություն** (հայերեն եւ անգլերեն):
- **Ֆոտոծառայություններ.** հանրապետական ֆոտոնորություններ, Ոյթեր համաշխարհային գործակալության ֆոտոնորություններ, Արմենպրեսի տարեկան ֆոտոտեղեկատվությամբ լազերային սկավառակներ, այլ ֆոտոծառայություններ:
- **Գովազդային ծառայություններ.** արտոնյալ պայմաններով գովազդի զետեղում զանգվածային լրատվամիջոցներում, ներառյալ Ինտերնետը, գովազդային տեղեկագրերի, ծալագրքույկների ստեղծում:
- **Համակարգչային զանազան ծառայություններ,** ներառյալ էլեկտրոնային փոստով հաղորդումների ուղարկումն ու ընդունումը:
- **Համաժիտանի մամլո սրահ**՝ հանդերձված մամլո ասուլիսների, հանդիպումների, շնորհանդեսների եւ այլնի անցկացման համար:
- **Լրատվության բնագավառի այլ ծառայություններ**՝ պատվիրատուի ցանկությամբ:

Գործում է զեղչերի ճկուն համակարգ

Մեր հասցեն է. Երեւան, Իսահակյան 28,
հեռ. 528460, 526702,
ֆաքս (3742) 151738, (8852) 525789
E-mail: contact@armenpress.am, apnews@armenpress.am

ԳՈՒՅԺ

Լոս Անջելեսում հրատարակվող «Շրջադաս» արվեստի ամսագրի խմբագրակազմը եւ աշխատակիցներն իրենց խորագույն ցավակցությունն են հայտնում Թովմաս եւ Մայիս Տեր-Հովսեփյաններին եւ Հովսեփյան ընտանիքին իրենց սիրելի հոր՝ **ՄԻՀՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ** մահվան առիթով:
Արամ Աղաջանյան, Արթուր Մեսչյան, Յուրի Գեւորգյան (Յուրոգ), Ժան Նշանյան, Հայկ Տիգրանյան, Գագիկ Խոջասարյան, Վարդան Հովհաննիսյան, Զոհրաբ Ալաջաջյան:

Լոս Անջելես (ԱՄՆ)

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

Ց

17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմեր «Աղվեսն ու արջը», «Աշխարհի ծայրը», «Կալլեն եւ Բոբոն», «Ինչպես շունը դաս տվեց խուլիգաններին»
18.00 Հեռուստասերիալ «Դալլաս»
19.00 Խոշոր շահում
19.15 Մարդու իրավունքները
19.35 Բանուգործ
20.00 Հայլուր
20.30 1 լուր
20.45 Կոմիտաս. մանրանվագներ
21.00 Հեռուստախաղ «Համայնքապետեր»
21.30 Հինգշաբթի
22.05 Գ/Ֆ «Նշանառուն»
24.00 Հայլուր

ՆՈՐՔ

19.00 Լուրեր
19.10 Մուլտֆիլմ
19.20 Մենք եւ կենդանիները
19.35 Միասին («Միր»)
20.20 Զինուժ
20.40 Ագրոժամ
21.00 Լուրեր
21.25 Աստղերը հուշում են
21.30 Սերիալ «Ծովային ոստիկանություն» (20-րդ մաս)
22.15 Սիրեցեք զմիմեանս
22.20 «Օրացույց» («Երեւան» ստուդիա)
23.00 Լուրեր
23.15 Գեղֆիլմ «Հրաժեշտի աղոթք»

Ֆ

19.05 Մամուլի սուրհանդակ
19.15 Հրապարակ
19.30 Սուրհանդակ
19.45 Մուլտեր
20.00 Դպրոցահասակ Գուրգեն Դաբաղյանը կատարում է հայկական աշուղական երգեր
21.15 Ներկայացնում է ռեժիսոր Լեւոն Մկրտչյանը. Հովաննես Շիրազ
21.30 Սուրհանդակ
22.00 Հրապարակ
22.15 Քաղաք
22.30 Մամուլի սուրհանդակ
22.40 Գանձերի կղզին կամ ինչպես տեսանք մենք Անգլիան
22.50 Կամ...կամ (կրկնություն)
23.30 Սուրհանդակ
00.00 Գիշերային կինոսրահ. «Փոյնք դյում»
02.25 Սուրհանդակ

Մ

7.00 Բարի լույս
10.00,16.00,19.00, 01.10 Նորություններ
10.15 «Դաժան հրեշակը»
11.30-15.45 Բիզնես TV
16.05 Սերիալ «Սինդբադի նոր արկածները»
16.15 Հրաշալի ընկերակցություն
17.05 Խելոք կանայք եւ տղամարդիկ
17.35 Մինչեւ 16 տարեկան եւ ավելի
18.00 «Դաժան հրեշակը»
19.15 Այդ զվարճալի կենդանիները
19.45 Այստեղ եւ հիմա
20.05 Ռոդեսզի հիշեն...
20.45 Սերիալ «Սվերները անհետանում են կեսօրին»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.50 Գ/Ֆ «Անձնագիր»
00.40 Կանացի պատմություններ
01.25 Գ/Ֆ «Հուսահատվածների ամրոցը»

ՌՏՊ

8.00, 10.30, 10.50 Բարի լույս. Ռուսաստան
10.15 Հերթապահ բաժանմունք
10.35 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.55 Ադրանքներ փոստով
11.00 Սանտա Բարբարա
11.45 Երաժշտություն. երաժշտություն...
12.00,15.00,18.00, 21.00,01.00 Լուրեր
12.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիներ»
13.30 Հին բնակարան. 1979 թիվ (2-րդ մաս)
14.35 «Խանութ բազմոցի վրա»

3 ԴԵԿՏԵՄԲԵՐ

14.55 Անշարժ գույքի խանութ
15.35 Սերիալ «Դինաստիա-2. Քոլբի ընտանիքը»
16.20 Հեռուստասերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 «Հեքիաթային հեծանիկ»
17.30 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աշտարակ
19.00 Համակարգիչ
19.15 Գ/Ֆ «Կլիմ Սամգինի կյանքը»
20.30 Հերթապահ բաժանմունք
20.35 «Մի իրադարձության պատմություն»
21.35 Մանրամասներ
21.45 «Երկու դաշնամուր»
22.30 Հեռուստասերիալ «Կեղտոտ պարեր»
22.55 Սերիալ «Մոլ Ֆլենդերս. նրա ուրախություններն ու վշտերը» (Անգլիա)
23.55 Սերիալ «Կեղծավորը»
00.45 Հերթապահ բաժանմունք

«ԱՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրքերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 958. Տպաքանակը 4000. Ստորագրված է տպագրության 2.12.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@